

ՀՅ ԳԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ 1918–1920 ԹԹ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ

Մաս իններորդ: ՀՅԴ Գերագույն դատական ատյանի 1920 թ. մարտի 24–ապրիլի 16–ի նիստերի արձանագրությունները*

Ընթերցողների ուշադրությանը ներկայացվող ՀՅԴ 9–րդ Ընդհանուր ժողովի որոշմամբ ստեղծված Գերագույն դատական ատյանի նիստերի արձանագրությունների վերջին փաթեթը ներառում է 1919–1920 թթ. ՀՀ բանակի ու գաղթականների վիճակի բարելավման նպատակով կուսակցության ծավալած գործունեությանը, ինչպես նաև Միացյալ Հայաստանի ակտի հետ կապված խնդիրներին ու տարածայնություններին վերաբերող նյութերը:

Ժամանակագրական առումով մեր ձեռքի տակ եղած նյութերն ավարտվում են 1920 թ. ապրիլի 16–ով՝ ընդհանուր առմամբ ընդգրկելով 74 նիստեր, որոնցից հետո, սակայն, ՀՅԴ Գերագույն դատական ատյանն իր գործունեությունը չի դադարեցրել: Պարզապես նրա հետագա նիստերի արձանագրությունները դեռևս չեն հայտնաբերվել: Ծանոթ լինելով մինչ այժմ հրապարակված նյութերին՝ միանշանակ կարող ենք եզրակացնել, որ հաջորդ նիստերի արձանագրությունները նույնպես ներառել են բավականաչափ հետաքրքրական և ուշագրավ տեղեկություններ:

ՀՅԴ Գերագույն դատական ատյանի արձանագրությունների ներկա փաթեթում քննության առարկա դարձած տարաբնույթ հարցերից առավել կարևորները նոր լույս են սփռում Հայաստանի առաջին հանրապետության պատմության վրա՝ տալով մեզ հուզող բազմաթիվ հարցերի պատասխաններ:

ՀՅԴ ներսում առկա ներկուսակցական խնդիրների քննության տեսանկյունից պետք է կարևորել Արևմտահայ գործադիր մարմնի ղեկավարներից Վարազդատ Տերոյանի և այլոց հակակարգապահական քայլերի առթիվ Հնայակ Մանուկյանի, Սահակ Տեր–Թովմասյանի և Արմենակ Մաքսապետյանի ցուցմունքները և հատկապես Ռուբենի (Տեր–Մինասյան) հիմնարար գնահատականները Միացյալ Հայաստանի գաղափարի իրագործման մեխանիզմների, ինչպես նաև արևմտահայ–արևելահայ հարա-

*Ընդունվել է տպագրության 1.12. 2014:

բերություններում դրսևորված հատվածականության երևույթի վերաբերյալ: Ներկա ավարտական հրապարակման մեջ շարունակվող՝ Տիգրան Դևոյանի մասին ցուցմունքներում ի հայտ են գալիս Առաջին Հանրապետության բանակի և հատկապես նրա հետախուզության գործունեության ուշագրավ մանրամասներ:

Իսկ ինչ վերաբերում է նախորդ հրապարակումներում տեղ գտած՝ Կարո Սասունուն ուղղված մի շարք մեղադրանքներին, ապա Գերագույն դատական ատյանի իրականացրած հանգամանալից և առարկայական քննության արդյունքում դրանք իսպառ հերքվեցին, և վերջինս անպարտ ճանաչվեց:

Թվարկված հարցերի քննարկման, ինչպես նաև դատավճիռների կայացման միջոցով ՀՅԴ Գերագույն դատական ատյանը կրկին դրսևորեց կուսակցության հեղինակության և արդարացիության պահպանման իր հետևողական ձգտումը:

Համոզված ենք, որ սրանով ավարտվող ՀՅԴ Գերագույն դատական ատյանի 1919–1920 թթ. նիստերի արձանագրությունների հրապարակումը, նպաստելով Հայաստանի առաջին հանրապետության պատմության բազմաթիվ էջերի լուսաբանմանը, միաժամանակ ընթերցող լայն հասարակայնությանը ցույց տվեց, որ այդ կուսակցությանը վերագրվող ավելորդ գաղտնապահության և սեփական սխալներն ու թերությունները թաքցնելու մասին մինչ օրս մեզանում և օտարների մոտ շրջանառվող տեսակետները չեն համապատասխանում իրականությանը: **Ընդհակառակը, 9 մասերից բաղկացած արձանագրությունների ներկա փաթեթի հրապարակումը «ՎԷՄ» հանդեսում առարկայական փաստերով ապացուցում է, որ Հայաստանի՝ իբրև հանրապետության գոյության գրեթե 100-ամյա ժամանակամիջոցում (1918–2014 թթ.), միայն ՀՅԴ Դաշնակցությունն է հրապարակել որպես կառավարող կուսակցություն իր ծավալած գործունեության ժամանակաշրջանում տեղ գտած թերությունների ու բացթողումների կապակցությամբ սեփական կուսակիցների հանդեպ իրականացված դատական քննությունների և նրանցում ընդունված որոշումների բովանդակությունը ներկայացնող հանգամանալից փաստաթղթեր:**

Վերջում կրկին հիշեցնենք, որ հրապարակվող արձանագրությունները պահվում են Հայաստանի ազգային արխիվի Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության ֆոնդում (Ֆ. 1457): Ընդգծումները բնագրին են: Անհրաժեշտության դեպքում կատարվել են ուղղագրական և կետադրական շտկումներ: Խմբագրական հավելումները տրվել են ուղղաձիգ [] փակագծերում:

Ավագ Ա. Հարությունյան
Պատմ. գիտ. թեկնածու

ԱՐԽԻՎ
2014
հոկտեմբեր-դեկտեմբեր,
թիվ 4 (48)
Գրքի,
2014
համահայկական համալիր

DOCUMENTATION OF AR FEDERATION'S HISTORY OF 1918–1920.
Part nine: Protocols of sessions of the AR Federation Supreme
Court from March 24 to April 16, 1920

Avag A. Harutyunyan

**ДОКУМЕНТЫ ИЗ ИСТОРИИ АРФ ДАШНАКЦУТЮН
1918–1920 гг.**

Часть девятая: Протоколы заседаний Верховного суда АРФ
Дашнакцутюн с 24-го марта до 16-го апреля 1920 года

Аваг А. Арутюнян

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Թ. ԸՆԴԷ. [անուր] ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԷ ԸՆՏՐՈՒԱԾ
[Գերագույն] ԴԱՏԱԿԱՆ ԱՏԵԱՆԻ ՆԻՍՏԵՐՈՒՆ

64-րդ նիստ

24 Մարտ 1920

Ներկայ էին՝ Յովսէփ Տէր-Դալթեան, Լևոն Թադէոսեան, Համ. [բարձում] Տէրտէրեան, Մերուժան Օզանեան:

Օրակարգ

Արևմտահայ Գործադիր Մարմնի և Վար. [ազդատ] Տէրօեանի հարց,

Կարօ Սասունիի հարց,

[Տիգրան] Դևօեանի հարց:

Լուծում

Արևմտահայ Գործադիր Մարմնի և Վարագդատ Տէրօեանի՝ անցեալ գործու-
նէութեան մասին ցուցմունքներ ստանալու համար հրախիրուեցան Դատ. [ալկան] Ատեանիս նիստին Բիւրօի անդամներէն ընկերներ Ռուբէն Տէր-Մինասեան և Ս. [իմոն] Վրացեան: Ընկեր Ռուբէն այդ առթիւ ըրաւ հետևեալ ցուցմունքները.

Ռուբէն Տէր-Մինասեանի ցուցմունքները: Արևմտահայ երկրորդ համագումարի² համար առանձնապէս աշխատանք կը թափէին Անդրանիկը, Արմէն Սասունիին, երկրի Կ. [նստրոնակական] Կօմիտէն և մի շարք կուսակցական ընկերներ: Սկիզբէն

1 **Վարագդատ Մկրտիչի Տերոյան** (1887–1938) – Վազգէն (Տիգրան) Տերոյանի եղբայրը: 1905 թ. ընդունվել է Գևորգյան ճեմարան, սակայն ուսանողական ելույթներին մասնակցելու համար հեռացվել է: 1909–1912 թթ. սովորել է Փարիզի Սորբոնի համալսարանում: 1914 թ. դասավանդել է Վանի Կեդրոնական վարժարանում, մասնակցել Վանի ինքնապաշտպանությանը, ապա մինչև 1918 թ. դասավանդել Բաքվի և Թիֆլիսի դպրոցներում: 1919 թ. փետրվարի 6–13-ին Երևանում Արևմտահայերի 2-րդ համագումարում ընտրվել է գործադիր մարմնի նախագահ: 1919-ից եղել է Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտեի (Ամերկոմ) ուսումնական հաստատությունների, որբանոցների և հիվանդանոցների տնօրեն, ապա Ամերկոմի ուսումնական մասի վերատեսուչ, 1930–1931 թթ.՝ ՀԽՍՀ Գրապալատի միջազգային գրքափոխանակության բաժնի վարիչ: Հետո եղել է գիտաշխատող, սրբագրիչ: 1930–1931 և ապա՝ 1935 թ. ձերբակալվել է և 1938-ին մահացել սիբիրյան արտորում: Գերմաներենից և ֆրանսերենից կատարել է թարգմանություններ, կազմել բառարաններ: Մանրամասն տես **Տերոյան Վ.**, Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, Եր., 2006:

2 Արևմտահայերի առաջին համագումարը կայացել է 1917 թ. մայիսի 2–11-ին, Երևանում, իսկ երկրորդը՝ 1919 թ. փետրվարի 6–13-ին: Երկրորդին մասնակցել է 55 պատգամավոր: Մանրամասն տես «Համառոտ տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի և կազմակերպիչ կօմիտեի հաշիւը», հրատ. «Արևմտահայ Գործադիր Մարմին»: Թիֆլիս, «Աշխատատր», 1919, 19 էջ:

մենք կը վախճայինք, որ այդ համագումարը Դաշնակցության դէմ արտայայտուեր, այդ պատճառով ալ չէինք ուզեր, որ նա կայանար: Տեսնելով սակայն, որ անկախ մեր ցանկութիւնէն՝ նա պիտի կայանար, վերջապէս ուզեցինք զայն մեր ձեռքը առնել: Եւ իրօք, համագումար եկած ընկերներուն մեծ մասը դաշնակցական էր, բայց կային անոնց մէջ բաւականաչափ դժգոհ դաշնակցականներ ալ՝ ինչպէս Պօնաբարդեանը և իր համախոհները: Համագումարը աշխատեցաւ ինքզինք շատ հեռու պահել Դաշնակցութիւնէն, նա նոյնիսկ չուզեց ներկայացուցիչ Բիւրօէն: Մենք, սակայն, Երկրի Կ.Ենտրոնական Կօմիտէի ընկերներու միջոցաւ, կ'ընեինք անհրաժեշտ բոլոր թելադրութիւնները: Զանգեզուրէն հրաւիրուած էին Անդրանիկն ու Պօնաբարդեանը, առաջինը չեկաւ, բայց երկրորդ եկած էր: Այդ համագումարին մէջ մենք կրցանք անցնել տալ մեր սկզբունքը, այն է՝ միացեալ անկախ Հայաստանի, որու պարլամէնտին մէջ արևմտահայեր ևս պիտի մասնակցեին: Դեռ Թիֆլիս եղած ժամանակ, երբ Պաթումի դաշնագրութիւն ալ չէր կնքուած, մենք հակառակ էինք այդ սկզբունքին, ժուսներ այդ ատեն ձեռք չէին քաշած Կովկասեան Հայաստանէն, և կը մտածեինք, որ տաճկահայերը ժուսահայկական գործին մասնակից ընել տալով՝ կրնանք վտանգել տաճկահայկական հարցը: Ի վերջոյ, սակայն, երբ Ազգ. [ային] Խորհուրդը դարձաւ պարլամէնտ, երբ մենք մեր կապերը վերջնականապէս կտրեցինք Ռուսաստանէն, այլևս առանց վարանելու կրնայինք հրապարակ դնել Մ. [իացյալ] Անկախ Հայաստանի սկզբունքը: Զախճախիչ մեծամասնութեամբ այդ տեսակետը կ'անցներ համագումարին մէջ:

Անհրաժեշտ էր նաև կեանքի մէջ իրագործել այդ սկզբունքը: Գործադիր Մարմնի մէջ այդ ատեն ինչպէս էր սակայն խլրտումը, Պօնաբարդեանը ձամբուեցաւ արտասահման գլխաւոր երկու տեսակէտներով, ոմանք կ'ուզեին զայն իրենց գլխէն հեռացնել, ուրիշներ կ'ուզեին, որ նա Պօղոս փաշայի³ մօտ երթայ՝ փաշայի միտքը պատրաստելու համար: Պօնաբարդեանի արտասահման ղրկուելու առթիւ մենք մեր դժգոհութիւնը յայտնեցինք, մանաւանդ երբ հասկցանք, որ Գործադիր Մարմինը անոր յանձնարարական ալ է տուեր: Մեր սկզբունքը Միացեալ Հայաստանի վերաբերմամբ իրագործելը բաւականաչափ դժուարութիւններու պէտք է բաղխեր: Այդ ատեն պարլամէնտի կէսը դաշնակցական էր, իսկ միւս կէսը՝ զանազան տարրեր, կային նոյնիսկ թուրքեր, եզիդներ: Մենք շարունակ հարց կը բարձրացնեինք, թէ այս օտար տարրերը երբ իրենց ներկայացուցիչներն ունեն, ինչո՞ւ 3-400.000 արևմտահայերը հեռու պիտի մնային պարլամէնտէն: Մեր թելադրութեան վրայ՝ Գործ. [ադիր] Մարմինը դիմում ըրաւ խորհուրդին, որ արևմտահայերը ևս ունենան իրենց ներկայացուցիչները: Այդ դիմումը ստորագրուած էր Տէրօեանի կողմէ, իսկ [Ռուբեն] Դրամբեան, [Գրիգոր] Պուլկարացի⁴, [Արմեն] Սասունի, և ինչպէս տարելապէս համաձայն էին այդ տեսակէտին և կ'ուզեին, որ Միացեալ Հայաստանի պաշտօնական յայտարարութիւն լինի:

Մենք սկսանք մտածել այդ ատեն, թէ անհրաժեշտ էր Միացեալ Հայաստանի ակտ յայտարարել: Մեր ֆրակցիան ալ սկսաւ զբաղել այդ խնդրով: Բայց երբ այդ հարցը պարլամէնտ տանեինք՝ պիտի պարտուեինք, մանաւանդ որ մեր մի քանի ընկերներն ալ այդ օրերուն կը բացակայեին Երևանէն: Ժողովրդական կուսակցութիւնը կ'ուզեր, որ արևմտահայերուն կէսը իրենցմէ լիներ: Ես արդէն սկսալ

3 Նկատի ունի Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարին:

4 **Բուլղարացի Գրիգոր (Կյոզեյան)** – ազգային-ազատագրական պայքարի գործիչ: Ծնվել է Կարիսում: Զբաղվել է զինագործությամբ: 1915 թ. Վանի ինքնապաշտպանության ակտիվ մասնակից: Կյանքի վերջում գործել է Կ. Պոլսում: Մահացել է 1922 թ.:

բանակցել Սամսոն Յարութինեանի⁵ և իր ընկերներուն հետ: Անոնք կ'ըսէին, որ վաղաժամ է այդպիսի յայտարարութիւն ընել, թէ անոնք արևմտահայերը ներկայացուցիչներ չունեն, ևլն.: Ես կը համոզեի գիրենք ըսելով, որ անոնք աւելի օրինաւորապէս ընտրուած են, քան մեր խորհուրդը, և թէ քանի որ մենք այդ համագումարի ծախքերուն համար 35.000 ր.[ուբլի] վարկ ենք քուէարկած, հիմա ինչպէս կրնանք ներկայացուցիչ չընդունել անոնցմէ: Գործադիր Մարմինը զուտ արևմտահայ անկախ հիմնարկութիւն է. անոնք ինչ տեսակ մարդիկ որ ընտրեն՝ մենք պարտաւոր ենք զանոնք ընդունել:

Ժողովրդականներ ունեցան և մի ուրիշ ժողով, որուն ներկայ եղանք ես, [Նիկոլ] Աղբալեանը և ուրիշ մը: Այդտեղ այն հարցը բարձրացաւ, թէ ռամկավարներն ալ պէտք է ներկայացուցիչներ ունենան՝ որպէս արևմտահայ: Մինչ այդ, Գործադիր Մարմինը մեր վրայ շարունակ ճնշում կը բանեցնէր, թէ ինչո՞ւ Միացեալ, Անկախ Հայաստանի ակտը չենք յայտարարեր, ինչո՞ւ իրենցմէ ներկայացուցիչներ չենք ընդուներ:

Մենք տեսակցութիւն ունեցանք թուրքահայ ռամկավարներու հետ ալ: Անոնք սկզբունքով հակառակ էին միացման, չէին ուզէր Արարատեան Հանրապետութիւնը⁶ կորիզը դառնայ մի ընդհ.[անուր] անկախութեան: Էսերները, Էզդէկներն⁷ ալ հակառակ էին: Մեր ֆրակցիային մէջ ալ դրինք այս հարցը և նորէն եկանք այն եզրակացութեան, որ այս պայմաններուն մէջ կարելի չէ հարցը պարլամէնտ տանել, Բիւրօին մէջ ալ այս ուղղութեամբ մտքերու փոխանակութիւն տեղի կ'ունենար, մէկ մասը կ'ուզէր ցրել խորհուրդը, միւսը դէմ էր:

Այդ ատեն երևան եկած էր Երևանի գեներալ կուպէրնատորութեան⁸ հարցը. յառաջ եկած էր կառավարական տագնապ: Մեր պատգամաւորներուն մէկ մասը բացակայ էր: Մենք մտածեցինք՝ եթէ մեր ֆրակցիան պարլամէնտ երթայ, մենք այդ հարցերուն մէջ պիտի պարտուենք, որովհետև մեծամասնութիւն չենք, ուստի որոշեցինք նիստերուն չերթալ և պարլամէնտը սապօթաժի ենթարկել: Միևնոյն ժամանակ, սկսանք բանակցել Գործ.[ադիր] Մարմինն հետ, թէ մենք կ'ուզենք խորհուրդին դադար տալ, օր մը յանկարծ գաղափար մը ծագեցաւ ուղեղիս մէջ. Միմոնին [Վրացյան] ըսի, որ եկուր մէկ քարով երկու թռչուն զարնինք, բերենք պարլամէնտ նստեցնենք արևմտահայ ներկայացուցիչները, ով որ մեր հակառակորդներէն դժգոհ մնայ՝ կ'անցնի կ'ելլէ կ'երթայ, այդպէսով՝ մենք մեր նպատակին կը հասնենք կատարելապէս:

Ֆրակցիայի մէջ հողը այդ ուղղութեամբ սկսայ պատրաստել, Վարազ.[դատ] Տէրօեան կրկին ֆրակցիային դիմած էր: Տէրօեան կ'ուզէր, որ ֆրակցիան չհամաձայնի իրենց առաջարկին և ֆրակցիայէն պաշտօնապէս մերժման թուղթ ստանայ, որպէսզի այնուհետև իր գործը շարունակէ իր ուզածին պէս:

Մենք մեր սապօթաժը կը շարունակեինք, պարլամէնտն արդէն դադար էր առած: Այդ օրերուն Վ. Միրախորեանն իմ տունը եկած էր. յայտնեցի անոր, որ նիստ չընեն, որովհետև այդ կերպով կ'ուզեն Դաշնակցութիւնը վարկաբեկել: Նա ինձ յայտնեց, որ իրենք այս անգամ նիստը բացուած պիտի յայտարարեն և պիտի խօսեն: Ես իրեն սպառնացի յայտարարելով, որ ատրճանակը ձեռքս կը յարձակեմ

5 **Հարությունյան Սամսոն** (1869, գ. Վերին Աղդան, ՀՀ Տավուշի մարզ-1941) – անվանի հասարակական-քաղաքական գործիչ: Եղել է Կովկասի Հայոց բարեգործական ընկերության նախագահ, Ազգային Բյուրոյի նախագահ:

6 Ոչ դաշնակցական քաղաքական ուժերի մեծամասնությունը Հայաստանի առաջին հանրապետությունը չընդունելով՝ այն անվանում էին Երևանյան կամ Արարատյան հանրապետություն:

7 Էսէն – սոցիալիստ-հեղափոխականներ, Էսդեկ – սոցիալ-դեմոկրատներ:

8 Ռուսերեն՝ նահանգապետություն:

ձեր վրայ և կը դադրեցնեն ձեր ընելիքը: Խորհուրդի փ.[ոխ] նախագահ Տէր-Խաչատրեան ալ տեսայ, յայտնեցի անոր, որ նիստի չերթայ, ժողով չբանայ, որովհետև վատ հետևանքներ կրնան յառաջ գալ ատկէ: Նա ինձ ըսաւ, որ ձևականութիւնը կատարած ըլլալու համար նիստի կերթայ, բայց ժողով չլինէր, քանի որ մեծամասնութիւն չկայ:

Ես այս խօսակցութիւններու մասին մեր ֆրակցիայի մէջ ոչինչ ըսի: Միայն ընկերներու յայտնեցի, որ քանի որ ունկնդիրներու խոշոր բազմութիւն մը եկած է, երթամ պարլամէնտ և հասարակութեան դասախօսութիւն մը կարդամ: Ընկերները չհամաձայնեցան ինձ հետ:

Մեր հակառակորդները արդէն ժողովի էին գացած: Ես նրբանցքին⁹ մէջ կը պտտեի: Չմոռնամ ըսել, որ նախապէս 10–15 ընկերներու մտքեր պատրաստած էի, յայտնելով անոնց, որ եթէ հակառակորդներ նիստը բացուած յայտարարեն և սկսին խօսել «Ձենք ուզեր այս պարլամէնտը, պէտք է այն ցրուի» ըսելով աղմուկ բարձրացնեն: Արտաշէս Պապալեանը տեսայ այդ ատեն, և իմ ըրած կարգադրութեան մասին խօսեցայ մի քիչ:

Հակառակորդներ նիստը կը բանան: Փ.[ոխ] նախագահ Տ.[եր] Խաչատրեան սակայն, ըստ սովորականին, զայն փակուած կը յայտարարէ՝ օրինական թիւ գոյութիւն ունեցած չըլլալուն համար: Երկրորդ նախագահ Զուպեանը¹⁰ սակայն կը յայտարարէ, որ նիստը ինք կը շարունակէ, ատոր վրայ էսերներէն Կրօն ձայն կ'ուզէ: Հանկարծ մեր տղաքը իրար կ'անցնեն, կսկսեն պոռայ, աղմուկ հանել, Սարգիս վարժապետը կսկսի ժողովուրդին ձառ խօսել: Այս ձայները լսելով՝ ներս կը մտնի Արտ.[աշէս] Պապալեանը և ժողովուրդին դառնալով «ցրեցէք պարլամէնտը» կըսի: Արտաշէսը անզգուշութեամբ մեր գործը կը խանգարէ: Սարգիս վարժապետը այնուհետև եկաւ մեր ֆրակցիան, սկսաւ ձառ խօսել և մեզ թելադրել, որ պարլամէնտը ցրենք: Եւ իրօք, այնուհետև այլևս նիստեր չունեցաւ, նա ցրուեցաւ:

Այս դէպքին վրայ՝ ժողովրդականները կակուղած սկսան մեզի մօտենալ: Սամսոնն [Հարությունյան] այլևս արդէն բացուած էր, իսկ Գարակէօզեանը¹¹ շատ էր միամիտ: Անոնց ընկերներէն շատերն ալ բացակայ էին: Մայիս 28–ը մօտեցած էր և մենք կը պատրաստուէինք մեր հանրապետութեան տարեդարձը տօնել: Ես և Զամալեան գացինք Գործ.[աղի] Մարմին յայտնեցինք, որ Միաց.[յալ] Հայաստանի ակտը պիտի յայտարարուի հանրապետութեան տօնի առթիւ և թէ պէտք է 12 արևմտահայ պատգամաւորներ ընտրուեն՝ պարլամէնտ ընդունուելու համար:

Գործադիր Մարմինը սկսաւ այս անգամ նահանջել: Մենք, սակայն, Բիւրօի անունով ձնշում բանեցուցինք անոր վրայ ըսելով, որ ովքեր որ դէմ լինեն ասոր՝ պիտի ձանջուեն Դաշնակցութեան հակառակորդներ և պիտի պատժուեն: Սմբատը¹² և Դրամբեանը կակուղցան, իսկ Պուկարացին սկսաւ տատանուել: Յետոյ ունեցանք ժողովներ, վիճաբանութիւններ, մինչև որ նախագահի կէս ձայնի առաւելութեամբ վճռուեցաւ Բիւրօի որոշման ընդառաջ երթալ:

Միաց.[յալ] Անկախ Հայաստանի յայտարարութեան ներքև ստորագրեցին

9 Նկատի ունի միջանցքը:

10 **Դավիթ Զուբյանը** Հայ ժողովրդական կուսակցության ներկայացուցիչն էր:

11 **Գևորգ Ղարազոյցյանը** Հայ ժողովրդական կուսակցության ներկայացուցիչն էր:

12 **Սմբատ Բորոյան** (Մախլուտո, Զորավար Սմբատ) (27.08.1881, Մուշ–16.03.1956, Երևան)–ազգային–ազատագրական պայքարի անվանի գործիչ: Սասունի ապստամբության, Իրանի Սահմանադրական հեղափոխության, Դիվանի ձակադատարտի մասնակից: 1918–1920 թթ. եղել է 3–րդ բրիգադի կամավորականներից կազմված գնդի հրամանատար, մասնակցել Փետրվարյան ապստամբությանը: Մարտից 1947 թ. ներգաղթել է Երևան: Կյանքի վերջին տարիներին պահակություն է արել Կոմիտասի անվան այգում:

Վերմիշեան, ևլն.: Արդեն իսկ ընտրուած էին 12 արևմտահայ պատգամաւորները, որոնց մէջ սակայն չէին մտած Գործադիր Մարմնի մի շարք անդամները: Մաքսապետեանը¹³ զօռով մենք մտցուցինք, Հայկակ Կօսօեանը միայն մի անգամ պարլամենտի նիստին ներկայ գտնուեցաւ, մէկ խօսքով՝ պարլամենտ մտածներուն շատերը զօռով մենք բերինք:

Գարակէօզեանին յայտնեցի, որ թրքահայ ներկայացուցիչները պիտի գան և թէ անհրաժեշտ է հանդիսաւորութեամբ ընդունել զանոնք: Ան համաձայնուեցաւ: Մայիս 28-ի օրը ժողովուրդը եկած-խոնուած էր, էսէրները միայն կը բացակայէին: Խատիսեանի կողմէ՛ ակտի ընթերցումէն յետոյ՝ Գործադիր Մարմնի կողմէ՛ Քրմոյեանը խօսեցաւ գրաւոր ձառ մը, թէ այլևս սահմանները վերցուած են երկու հատուածներու միջև, բայց անհրաժեշտ է համագումարի պահանջը իրականացնել՝ արևմտահայերէն ալ ներկայացուցիչներ ընդունելով: Խատիսեան այդ ձառին կը պատասխանէ դրական մտքով՝ պատրաստակամութիւն յայտնելով արևմտահայերէն ալ ներկայացուցիչներ ընդունելու: Ատոր վրայ արևմտահայ 12 պատգամաւորներ ժողովուրդին մէջէն դուրս գալով՝ մտան պարլամենտ: Ժողովրդականներ զարմացած մնացին, բայց ոչինչ կըսեն: Այնուհետև, 1-2 նիստ ալ ունեցաւ պարլամենտը և մեծամասնութեամբ իրեն դադար տուեց:

Կարօ Սասունիի հարց: Կարօ Սասունի իր խնդրի առթիւ մեզ գրած նամակին մէջ յայտնած էր, որ Արամ Սարգսեան Պօլսոյ ընկերներուն իր մասին վարկաբեկիչ նամակ մըն էր գրած: Այդ առթիւ կանչուեցաւ մեր նիստին Ա. Սարգսեանը, որ ըրաւ հետևեալ ցուցմունքները.

«Ուսուցիչ էի ես: Արևմտահայ Խորհուրդն էր, որ մեր անսականները կը վճարէր: Ժամանակ մը ուսուցչութիւն ընելէ յետոյ ես՝ որպէս վաշտապետ, գացի Վան և յետոյ վերադարձայ: Ինձ ըսին, որ ովքեր որ ուսուցիչ եղած են՝ իրենց ռոճիկները պիտի ստանան Կարօ Սասունիէն, որը իր հետ 300.000 ռ.[ուրլի] է բերեր: Ուրիշներուն Կարօն դրամ տուեր է, ես ալ դիմեցի, որ ինձ ալ տայ, բայց նա մերժեց զիս՝ փողը հատած է ըսելով:

Կարօի մասին ժողովուրդը կը խօսեր, թէ նա զանազան պատճառներով իր քով եղած փողերը չբաժներ, երբ զօրքի համար դրամ կ'ուզուի՝ նա կ'ըսէ եղեր, որ իմ քով եղած դրամները որբանոցի համար են, երբ որբերու համար դրամ կուզեն՝ նա կըսէ եղեր, որ իմ քով դրամները զօրքի համար են: Չմոռնամ ըսել, որ Կարօ Սասունի արևմտահայ Բ. համագումարին ոչ մի հաշիւ չտուաւ:

Հնայեակ Մանուկեանը երբ Թիֆլիսէն հոս եկաւ՝ Գաբրիէլ Հացագործեանէնց տունը տեղի ունեցաւ ժողով մը, ուր ան տուաւ զեկուցում: Այնտեղ էին նաև Ներսէս Պասեան, Արշաւիր Գազանձեան և ուրիշներ: Հնայեակը ըսաւ, որ Կարօ Սասունիին իրեն քով եղած դրամներէն 12.000 ռ.[ուրլի] յանձներ է իրեն: Այդ առթիւ իմ մէջ կասկած ծագեցաւ, թէ ինչպէս Կարօն դրամ չունեն կըսեր, բայց 12.000 ռ.[ուրլի] կը յանձներ Հնայեակին:

Ընկերական շրջանակներուն մէջ Կարօի մասին շատ աննպաստ կարծիք կար, կըսէին, որ ան 30.000 ռ.[ուրլի] տուած և խալի¹⁴ մը գնած է: Ես ասոնք գրեցի Պօլիս՝ ընկերոջ մը: Կարօն, երբ այստեղ վերադարձաւ, օր մը զիս իր երկու սասունցի ընկերներուն միջոցաւ բռնել տալով՝ ապտակեց, ես չկրցի ապտակին պատասխանել, որովհետև Կարօ Սասունիին մենակ չէր»:

Վահան Փափագեանի ցուցմունքները:

¹³ Մաքսապետյան Արմենակ Մկրտիչի (1885, Վան-11.07.1957, Արաք, Իրան) – մանկավարժ, խմբագիր:

¹⁴ Գորգ:

Ուղղակի Կարօ Սասունիի գործունէութեան մասին եւ ոչինչ գիտեմ: Սա միայն գիտեմ, որ Թիֆլիսէն Գլխաւոր խորհուրդի կողմէ մօտ 1.500 հնչուն ոսկի դրկուած էր Արմէն Սասունիի, որուն ալ առաջարկուած էր մարմին մը կազմել, գործածել այդ մարմնի միջոցաւ այդ դրամները և յետոյ հաշիւ ներկայացնել: Չգիտեմ, թէ այդ հաշիւները ներկայացուած են, թէ ոչ:

Կարօ Սասունին ինք Ապահովութեան խորհուրդի անդամ էր, դրամներ ստացած է, որոնց հաշիւները տուած է, բայց տակաւին անոնք չեն քննուած, թէև մի քանի ամիսներ առաջ ստեղծուեցաւ հաշուեքննիչ մարմին մը Հմայեակ Մանուկեանէ, Արտակ Դարբինեանէ¹⁵ և Եզնիկ Քաշունիէ, որոնք տակաւին ըստ էութեան հաշիւները չեն քննած:

Կարօ Սասունիի ցուցմունքները իր մասին:

40 ոսկի տուած էր ինձ Ռոստոմը, որուն 11 ոսկի և 2 արծաթը ի վերջոյ տուած եմ իրեն՝ Ռոստոմին, իսկ մնացած 28 ոսկի և 3 արծաթը գործածած են Տիգրան Գաւասեանը, Սասունցի Մանուկը և Արմէն Սասունին՝ գերիներ ազատելու համար, որոնք ի վերջոյ իրենց հաշիւները ինձ յանձնած են և ես զանոնք տուած եմ Բիւրօի հաշուապահ Սմբատին: 28 ոսկի և 3 արծաթի հաշիւները Ռոստոմին տալէս յետոյ՝ ուզեցի բժիշկ Դալթեանին ալ տալ, բայց որովհետև անիկա չկրցի գտնել իր տանը՝ տուի Սմբատին: Ռուբէնը ինձ մի քանի անգամ թելադրեց, որ այդ հաշիւները հրապարակեմ թերթի մէջ: «Մէկ հայ, մէկ ոսկի»-ի վերաբերեալ իմ քով ունէ դրամ մնացած չէ այլևս: Անդրանիկի միջամտութեամբ Արամեանցի¹⁶ կողմէ 1.994 ռ. [ուրլի] տրուած է սասունցիներուն իբրև իրենց ծախս՝ գերիներ ազատելու համար: Այդ դրամը ստացուած ըլլալուն համար ես իբրև ներկայացուցիչ՝ անոնց թղթին ներքև ստորագրած եմ: Այդ դրամը գործածուելէ յետոյ հաշիւը ներկայացուցուած է այն հաստատութեան, որմէ այդ փողը ստացուած է: «Մէկ հայ, մէկ ոսկի»-ի մասին ես ստացած չեմ ունէ գումար, բացի Ռոստոմի կողմէ ստացածէ, որուն մասին արդէն խօսեցայ:

Իմ մէկնելէս վերջ Խնուսի և Մշոյ շրջանը կազմուած է գերիներ ազատող մարմին մը՝ բաղկացած Արմէն Սասունիէ, Տիգրան Գաւասեանէ, Սասունցի Մանուկէ և Աշոտ Իսրայելեանէ: 150 ոսկի անոնք ստացեր են և ծախսեր: Հաշիւներ կայացուցած են թէ չէ՝ չգիտեմ: Չմոռնամ ըսել, որ ոչ մէկ հայու մէկ ամբողջ ոսկի չէ տրուած. 5, 10, 15, 20 հայուն տրուած է ի վերջոյ մէկ ոսկի:

Ինչ կը վերաբերի այն յայտարարութեան, որ ըրեր է ձեզ Արամ Սարգսեանը, իրողութիւնը հետևեալն է:

Ապահովութեան Խորհուրդի ներկայացուցիչ էի, երբ ընկերներս հիւսիս. [ային] Կովկաս գնացին: Այդ խնդրով Խորհուրդի գումարները Ազգ. [ային] Խորհուրդի տրամադրութեան տակ դրուած եղան, որոնք սակայն իմ հրահանգով պիտի գործածուէին: Ապահովութեան Խորհուրդի կարգադրութեամբ այդ գումարները մեծ չափով փոխանցուեցան որոշ հաստատութեանց, որոնց մասին մանրամասն հաշիւներ տպագրուեցան թերթերու մէջ: Ատկէ յետոյ՝ տակաւին իմ քով մնաց մօտաւորապէս 16-17.000 ռ. [ուրլի], որուն 12.000-ը յանձնած եմ Հմայեակ Մանուկեանին իբրև Խորհուրդի անդամի, 3.000 ռ. [ուրլի]՝ Յակոբ Տէր-Ջաքարեանին, իսկ 3.000-ը՝ Քրմօյեանին: Հաշիւները և գումարները յանձնուած են Արևմտահայ Խորհուրդի հաշուապահական արխիւներուն ի քննութիւն 1919 յունվ [ա]ր. 1-ին: Բոլոր հաշիւ-

15 Դարբինյան Արտակ (1878-1950) – անվանի հասարակական գործիչ, խմբագիր, Արմենական կուսակցության, իսկ հետագայում՝ ՌԱԿ անդամ: 1915 թ. Վանի ինքնապաշտպանության մասնակից: Հուշերի հեղինակ:

16 Արամյան Միքայել (1843-1924)– անվանի նավթարդյունաբերող, բարեգործ: Առաջին աշխարհամարտի տարիներին ապաստարաններ է կառուցել հայ գաղթականների համար:

ԱՐԽԻՎ

2 (ՃԲ) ԳԱՐԻԻ, ԹԻՎ 4 (48) ԽՈՒՄԻՆԵՐ-ՂԵՂՄԵՆԵՐ, 2014

ՎԷՆ ԽԱՆԿԱԿԱՅԿԱԿԱՆ ԽԱՆՔԵՆ

ներուն քօրին¹⁷ իմ քովն է, մի քանի ամիսներ առաջ ժողով մը ընտրուած է, որ քննեն այդ հաշիւները:

Մուշի մէջ հաւաքուած ցորեններու խնդիր: Այս մասին ես արդէն խօսեր եմ: Զիս կը մեղադրէ Սմբատը՝ որպէս թէ ես ձրի ցորեններ հաւաքած եմ և դրամով գաւնոնք ծախած ու հաշիւը ներկայացուցած եմ:

1916-ին, երբ Մուշը գրաւուեցաւ՝ ես դարձայ այնտեղ լիազօր Բարեգործակա-նին¹⁸, ընդամենը 6 ամիս: Ստացեր եմ 6.000 ր.[ուրլի]: Ինձ հետ էին նաև Համ. Մա-կարեանը, Միք. Տէր-Գէորգեանը և Տիգրան Զօրեանը: Հաւաքեր եմ մօտ 8.000 փութ ցորեն, մէկ մասը ձրի, իսկ մէկ մասն ալ՝ փութը 1 րուպլիով, 50 կօպեկով և աւելի պակասով: Հաւաքման գործին մէջ ես ընդհ.[անուր] հսկող էի: Ռուբէնը¹⁹ ինձ փող դրկած էր, որ ցորեն հաւաքեմ: Ես այդ փողն ալ տուած եմ Ամատու-նիին²⁰, որ ինք գնէ, և յետոյ այդ հաշիւները ինձ ներկայացնի: Ձրի ցորեն հաւա-քած եմ այսպէս: Օրինակ, գինուորներ գտած են 500 փութ ցորեն, ես անոնց կու-տայի 100-200 փութ և մնացածը կը գրաւեի: Սմբատը, Մուրադը և ուրիշներ այս մասին կը գանգատեին, առարկութիւններ կընէին, բայց ես գանոնք չէի լսեր:

Բարեգործականին ես տուած եմ մանրամասն հաշիւներ, այդ գիտի Շարա-ֆեանը: Բարեգործականի անունով ես 4.000 փութ ցորեն հաւաքել և բաշխել տո-ւած եմ և ծախսած եմ ընդամենը 3.000 ր.[ուրլի], երբ իմ հաշիւները փակուեցան՝ Բարեգործականը ինձ շնորհակալութիւն յայտնեց և նոյնիսկ 500 ր.[ուրլի] տուաւ, որ Կոճոռ երթամ ու հանգստանամ, որովհետև ես իրենց 150.000 ր.[ուրլի]-ի շահ ցոյց տուած էի, ահագին քանակութեամբ ոչխար, մսացու գնած էի:

1917-էն, սակայն, երբ կուսակցական պայքար կսկսի, երբ արևմտահայեր ևս մտնել կ'ուզեն Արևմտահայ Խորհուրդին մէջ, որպէս թէ այդ ատեն՝ Սամսոն Յարութիւնեանը իմ մասին հնչակեանի մը աննպաստ կերպով կարտայայտուի, թէ ես ատոր շատ չեմ հաւատար:

Ինչ կը վերաբերի Արամ Սարգսեանին ապտակ մը իջեցնելուն՝ իրողութիւնը սա է: Արամ Սարգսեան Պօլսոյ ընկերներուն չափազանց վարկաբեկիչ նամակ մը կ'ուղարկէ իմ մասին: Ես այս մասին գրեցի Բիւրօին, որ տղային հարցաքննեն՝ պատասխան չստացայ: Գրեցի Երկրի Կ.[ենտրոնական] կօմիտէին, գրեցի ընկեր-ներուս, ըսելով նոյնիսկ, թէ բռնեցեք և ապտակեցեք այդ տղուն: Պատասխան չստացայ ոչ մէկէն: Իսկ Արամ Սարգսեան այս լուրը լսելով՝ հոս կը յայտարարէ, թէ ինձի ապտակող տակաւին չէ ծնած: Ես երբ Երևան եկայ՝ օր մը բռնեցի այդ տղան և ապտակ մը իջեցուցի երեսին: Այս տղան իբրև սպայ՝ կանոնաւոր կեր-պով իր ամսականները ստացած էր: Մի տարի առաջ ուսուցիչ է եղեր: Նա շարու-նակ գնաց-եկաւ և ինձմէ լիկվիդացիոն ամսական պահանջեց, իսկ ես իրեն յայտ-նեցի, թէ որ դրամ չունեմ, ատոր վրայ է, որ նա այդպիսի նամակ գրած է Պօլսոյ ընկերներուն: Հնայեակին տուածս Թիֆլիս եղած գումարներն էին, եթէ այդ տղան զիս վարկաբեկելու համար գրած է այդ նամակը, ապա կ'առաջարկեի, որ դուք Պօլսոյ Մարմին այդ առթիւ նամակ մը գրեիք և իրողութիւնը պարզեիք:

Ս. Վրացեանի ցուցմունքները Դևօեանի հարցի առթիւ:

Դևօեանի մասին ընկ. Վրացեան հետևեալը յայտնեց: Ինձ անձնապէս միայն յայտնի է, որ Դևօեան տեղեկութիւններ կուտար նաև կամաւորական բանակին, անձնապէս յայտնի էր նաև, որ նա կամաւորական բանակին մասին կուտար տե-ղեկութիւններ մեզ: Ես գիտեի, որ նա հետախուզական բաժնի վարիչն էր և իր

¹⁷ Պատճենը:

¹⁸ Նկատի ունի Հայ Բարեգործական ընդհանուր միութիւնը:

¹⁹ Նկատի ունի Ռուբեն Տէր-Մինասյանին:

²⁰ ՀՅԴ Կ. Պոլսի պատասխանատու գործիչներից:

գործը յառաջ կը տաներ այդ ուղղությամբ: Ես հիմք չունեմ մտածելու, որ նա դիտաւորեալ կերպով նահանջ սարքած է իր զեղծումները ծածկելու համար:

Հ.Յ.Դ. Դատ.[ական] Ատեանի
Նախագահ՝ Տէր-Դաւթեան [ստորագրություն]
Անդամներ՝ Լ. Թաղէոսեան [ստորագրություն]

ԱՐԽԻՎ

65-րդ նիստ

26 Մարտ 1920

Ներկայ էին՝ Յովսէփ Տէր-Դաւթեան, Լևոն Թաղէոսեան, Համ.[բարձում] Տէր-տէրեան, Մերուժան Օզանեան:

Օրակարգ

Թիֆլիս սպանուած ինժ.ները] Ղասում Պէկովի հարցը,
Երևանի Կեղ.[րոնական] կոմիտէի յարուցած հարցը ՀՅԴ Բիւրօի դէմ,
Ռուբէն Քաջբերունիի ցուցմունքները իր մասին:

Լուծում

Ընկեր Սմբատ Խաչատրեան Դատ.[ական] Ատեանիս ուշադրութիւնը հրաւիրեց Թիֆլիսի մէջ մի քանի հոգիներու կողմէ ինժեներ Ղասում Պէկովի վրայ եղած սպանութեան վրայ, որը Վրաստանի և Ադրբեջանի թերթերը Դաշնակցութեան կողմէ կատարուած տէրօրական գործողութիւն մը կը համարեն: Դատ.[ական] Ատեանս որոշեց ընկ. Լ. Թաղէոսեանի միջոցաւ Բիւրօէն այս մասին տեղեկութիւն պահանջել, թէ ինչո՞ւ նա սպանուած է, որո՞ւ որոշումէն ելնելով:

Երևանի Կ.[ենտրոնական] Կոմիտէն N. 92 և մարտ 20 թուակիր գրութեամբ մը մեզ դիմելով՝ կ'առաջարկէր յարթել այն դժուարութիւնը, որ առաջ եկած էր իր և ՀՅԴ Բիւրօի միջև: Մօտ 9 ամիսներ առաջ Կ.[ենտրոնական] կ.[ոմիտէ]–ին տպարան մը յաջողէր է ձեռք բերել Թիֆլիսէն: Բիւրօն, սակայն, Կ.[ենտրոնական] կ.[ոմիտէ]–ի ձեռքէն առեր է այդ տպարանը և հակառակ իրեն եղած բազմաթիւ գրաւոր և բերանացի դիմումներուն՝ չէ վերադարձուցեր զայն Կ.[ենտրոնական] կոմիտէին: Վերջապէս, առաջարկեր քննել այդ խնդիրը և իր ստացուած տպարանը իրեն վերադարձնել տալ՝ ազատելու համար զինքը իր նիւթական նեղ կացութիւնէն:

Ընկ. Ռուբէն Քաջբերունիի դէմ դատական հայց են յարուցած Բագուի մի քանի ընկերները, մասնաւորապէս՝ Թէոդորոս Դանիէլեանը: Այս առթիւ ընկ. Քաջբերունին ըրաւ հետևեալ ցուցմունքները, խոստանալով գրաւոր կերպով ևս զանոնք ներկայացնել:

Ռ. Քաջբերունիի ցուցմունքները (համառօտ կերպով արձանագրուած)

Էնգէլիի որբանոցը չափազանց անմխիթար կացութեան մէջ կը գտնուեր: Ռոստոմի և մի քանի այլ հեղինակաւոր ընկերներու առաջարկութեան վրայ՝ ես յանձն առի կառավարել այդ որբանոցը: Մինչև այդ՝ որբանոցի ել և մուտքի հաշիւները շատ խառնափնթիւր վիճակի մէջ կը գտնուէին և մահացութեան թիւը դարձած էր սարսափելի: Մի քանի ընկերներու – Եօլեան, Յովհաննիսեան, ևլն., աջակցութեան վրայ կոթնած՝ ես այդ գործին լծուեցայ: Իմ նախորդին հաշիւները ես չստացայ, որովհետև ինչպէս ըսի՝ չափազանց խառնափնթիւր էին, որովհետև տեղի ունենալիք տնտեսական և հաշուապահական գործառնութիւններուն համար ես կարգեցի Թէոդորոս Դանիէլեանը, իմ պաշտօնի անցնելէ 8–10 օր յետոյ է,

2 (ժԲ) քառի, թիվ 4 (48) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2014

Վէմ համահայկական հասոյես

որ ան ալ հրախրուեցաւ գործի, եթէ ատեն կանոնաւոր հաշուապահութիւն չէ եղած որբանոցին մէջ՝ այդ ալ ոչ թէ իմ, այլ՝ իմ նախորդին մեղքն է:

Որբանոցի ծախքերը կը հոգային անգլիացիները, իսկ պակասորդը կը լրացներ Ազգ. [ային] Խորհուրդը: Այդ որբանոցին մէջ Վարդան Սարգսեան անունով օգնական ես չեմ ունեցած: Որբերը փոքրիկ խմբակներու բաժնուած էին, որոնց կը հսկէին մի շարք օրիորդներ: Ասոնք կը պատրաստէին ամեն երեկոյ ցուցակը հետևեալ օրն իրենց պէտք ունենալիք մթերքներուն: Ես միշտ անոնց կը թելադրէի՝ որբան կարելի է իրենց հաշիւները կանոնաւոր պատրաստել: Վարդան Սարգսեան եղած է այնտեղ մատակարար, իսկ Վանցեանը՝ անոր հետ աշխատող: Եթէ հաշիւներուն մէջ թերութիւններ եղած են, ատոնց պատասխանատուն ինքը՝ Թէոդորոսն է, որովհետև ինքն էր այդ գործը հսկողը:

Բոլոր մթերքները փաստաթղթերով կը մտնէին և փաստաթղթերով ալ դուրս կ'ելլէին, ասոնց վրայ ևս կը հսկէր ինքը՝ Թէոդորոսը: Ճիշտ է, մթերքները ծախողներէն շատ անգամ փաստաթուղթ չէր առնուեր և այդ հասկնալի էր, որովհետև ծախողներէն շատեր ստորագրութիւն մը գրել անգամ չէին գիտեր, շատ անգամ ասոնք իրենց ձկնոջ մատը մեղանոտելով²¹ իբրև ստորագրութիւն կը դրոշմէին թղթերը, և Թէոդորոսը ինքը կընդունէր այդ թղթերը որպէս դօքիմաններ²²:

Չուերու, բրնձե գեղծումներ եթէ եղած են՝ ատոնք ինձ ներկայացուած չեն: Միթէ ես կրնայի անտարբեր մնալ, եթէ նման խնդիրներ ինձ ներկայացուէին: Բրինձի փոխանակութիւն մը տեղի ունեցեր է Էնգելիէն իմ հեռանալէս վերջ:

Այս բոլոր մեղադրանքները հանուեցան Վարդան Սարգսեանի դէմ, Բագուում: Թէոդորոսը իմ անունն ալ սակայն այդ գործերուն խառնեց, երբ իր եղբայրը Բագուի մէջ տիկին Գիւլխանդանեանի²³ կողմէ վռնտուեցաւ: Այդ բանը Թէոդորոսը ինձ վերագրեց: Նա սկսաւ հոս հոն յայտարարել ալ, թէ երբ իր եղբայրը հիւանդ պառկած է եղեր, ես անոր մածուն անգամ չեմ տուեր:

Թէոդորոսը ինձ առաջարկեց, որ Վարդան Սարգսեանին տեղ Սիմօն Փօլեանին նշանակեմ, որովհետև վերջինս ինտելիգենտ մարդ էր: Ես չկրցի իրեն առաջարկը կատարել գլխաւոր երկու պատճառով. նախ Փօլեանը շատ կարևոր գործի վրայ էր՝ սպիտակեղեններու կառավարիչ լինելով, երկրորդ, որ նա չուզելով մնալ իր գործի վրայ՝ կ'ուզէր մեկնել:

Իմ օրով որբանոցին մէջ մահացութեան դէպքերը շատ նուազեցան: Պետրովսկը երբ գրաւուեցաւ և անկէ հիւանդներ եկան, անոնց մէջէն էր, որ առաջին շաբաթներուն շատերը կը մեռնէին:

Ես առաջ Թէոդորոսին հետ չունէի: Անգամ մը՝ ան Ռաշտ գնաց և վերադառնալով՝ գինով վիճակի մէջ ապտակեց ֆելդշերը, որ իբրև թէ վարժուհիի մը դիտմամբ հիւանդներուն մէջ դրած լինի՝ գայն հիւանդութեամբ վարակել տալու համար: Ես միջամտեցի՝ յայտարարելով Թէոդորոսին, որ ֆելդշերը մեղք չունի, ամեն ինչ իմ կարգադրութեամբ եղած է: Այդ օրը ան սկսաւ այդ բանի համար ինձ մեղադրել և յանցաւոր բռնել: Ես այդ խնդիրը քննել տուի և յետոյ ալ հարկադրուեցայ Թէոդորոսը հեռացնել իր գործէն:

Անոր հեռացուելէն մի քանի օր վերջ ես ալ եկայ Բագու և հիւանդ պառկեցայ: Յետոյ միայն լսեցի, որ Սարգիս Վարդանեանի²⁴ դէմ դատ է յարուցուեր: Այս վերջնոյն ես առաջարկեցի, որ իր հաշիւները քննել տայ, նա ինձ խոստացաւ այդ, բայց յետոյ անցեր գացեր է Պարսկաստան:

21 Թանաք:

22 Փաստաթղթեր:

23 Նկատի ունի Աբրահամ Գյուլխանդանյանի կնոջը:

24 Այսպես է բնագրում: Ճիշտը հակառակն է:

Որբանոցի իմ հաշիւները առանձին յանձնաժողովի մը կողմէ մանրամասն կերպով քննուած են:

Հ.Յ.Դ. Դատ.[ական] Ատեանի
Նախագահ՝ [առանց ստորագրության]
Անդամներ՝ [առանց ստորագրության]

ԱՐԽԻՎ

66-րդ նիստ

29 Մարտ 1920

Ներկայ էին՝ Համբարձ.[ում] Տէրտէրեան, Մերուժան Օզանեան:

Օրակարգ

Վաղարշակ Յոխիկեանի ցուցմունքները Արևմտահայ Գործադիր Մարմնի մա- սին:

Լուծում

Ընկ. Վաղարշակ Յոխիկեան հետևեալ ցուցմունքները տուաւ Արևմտահայ Գործադիր Մարմնի մի շարք անդամներու գործունէութեան մասին:

Ինչպէս դուք գիտեք, երբ կայացաւ արևմտահայ երկրորդ համագումարը, այնտեղ ընդունուեցաւ Միացեալ Անկախ Հայաստանի տեսակէտը և այդ ուղղու- թեամբ մի բանաձև ալ անցաւ: Դժբախտաբար, սակայն, Գործ.[ադիր] Մարմնի մի քանի անդամներ (Տէրօեան, Սմբատ, Պուլկարացի, Դրամբեան) իրենց բռնած ըն- թացքով դէմ գացին տրուած այդ որոշման, Վարազդատ և իր ընկերակիցներ կը մտածեին, որ եթէ տաճկահայկական հարցը միացուեր ռուսահայութեան հարցի հետ՝ պիտի տուժուեր տաճկահայ հարցը: Ատկէ զատ, անոնք կը մտածեին, որ եթէ մենք տաճկահայերս համաձայնեինք Հայաստանի կառավարութեան հետ՝ մենք քիչոտոր լինելով, մեր ձայնը պիտի կրնար խեղդուել: Այս ատենները, երբ երևան ելաւ նաև Անդրանիկի հարցը, Փարիզի պատուիրակութիւնը, ևլն., Վա- րազդատ Տէրօեան և իր ընկերակիցները սկսան անոնց կողմը դառնալ ու անոնց- մէ ներշնչումներ ստանալ:

Ճիշտ է, որ Պիչի և Թօմսընի մօտ մարդիկ գացած էին, բայց այդ եղած է ընդ- հանուր համաձայնութեամբ: Երբ ես և սօքթթ. Պօնաբարդեան Թիֆլիս էինք՝ Պիչ և Թօմսըն իրենք պահանջեցին մեզմէ ներգաղթի ծրագիր մը ներկայացնել իրենց: Մենք այդպիսի ծրագիր մը կազմեցինք, նախ ներկայացրինք զայն Հայր Աբրահա- մին²⁵ (այդ ատեն՝ հայոց կառավարութեան կողմէ Թիֆլիս եկած էր ան), անոր համաձայնութիւնը ստացանք և յետոյ ներկայացուցինք այդ Պիչին և Թօմսընին: Յետոյ, երբ մեր այդ ծրագիրը մենք ներկայացուցինք Գործ.[ադիր] Մարմնին, վեր- ջինս այդ մասին իր համաձայնութիւնը տուաւ:

Ինչ կը վերաբերի այն հարցին, թէ Գործադիր Մարմինը Անդրանիկին դիմած է կազմուելիք արևմտահայ զօրամասերու հրամանատարութիւնը ստանձնելու համար՝ իրողութիւնը հետևեալն է: Ամբողջ Գործադիր Մարմինը և ոչ թէ մի քանի անդամներ միայն՝ դիմած է Անդրանիկին առաջարկելով, որ ստեղծուեն և պահ- պանուեն արևմտահայ զօրամասեր: Անդրանիկ ընդունած է այդ և որոշ պայման- ներ ներկայացուցած է, որոնք սակայն չեն ընդունուած կառավարութեան կողմէ: Ասոր վրայ՝ Վարազդատ և իր ընկերները նամակ գրած են Անդրանիկին նախա- տելով կառավարութիւնը, որ չի ընդունած իր պայմանները:

25 Նկատի ունի Ավետիք Սահակյանին:

ՎԷՆ համահայկական համոզեալ Զ (ԺԲ) քարի, թիվ 4 (48) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2014

Գործադիր Մարմնի նպատակն է եղած (միայն 4 անդամներու մասին է մեր խօսքը) կազմել արևմտահայ գործառնական, որոնք շարունակ իր տրամադրութեան տակ լինեին: Մենք, սակայն, միշտ այդ տեսակէտին դէմ եղած ենք, և ուզած ենք շարունակ պետութեան միջոցաւ գործել, մանաւանդ որ դաշնակիցներէն յոյսեր չունենալով՝ մեր ամբողջ յոյսը պարտաւոր էինք դնել մերիններուն վրայ: Վարագդատ, սակայն, տեսնելով որ Տիգրան Պաղտասարեան իր գնդով չի ենթարկուեր իրենց, կը յիշեմ, նամակ գրած է անոր՝ զայն դաւաճան անուանելով: Անդրանիկն էլ այդ խնդիրը ներկայացուցած է իրեն՝ միացնելով նոյնիսկ առաջարկները, որոնք Տիգրան Պաղտասարեանը և իր հետ գործող մարդիկը հացկատակներ կ'անուանեին:

Գործադիր Մարմնի նախագահութիւնը ուրիշ կերպով ալ վնասած է Տիգրան Պաղտասարեանի գնդին: Որպէսզի անոր մէջ չմտնեն արևմտահայերը՝ վերջիններուս տուած է բազմաթիւ կեղծ վկայականներ, անոնց տարիքը աւելցնելով կամ պզտիկեցնելով: Այդ վկայականները դեռ մինչև վերջերս արևմտահայերը կը գործածեին զինուորութիւնէ ազատելու համար: Վերջերս ես ինքս Վալադէանիս ըսած եմ, թէ Վարագդատի և իւրայիններու կողմէ ստորագրուած վկայականներուն չհաւատայ երբեք:

Գործ.[ադիր] Մարմինը նախապէս ինք դիմած է պարլամենտի նախագահութեան՝ առարկելով, որ 12 արևմտահայեր ընդունուեն պարլամենտ, որքան կը յիշեմ այդ ատեն վարչապետը հոս չէր: Գր.[իգոր] Պուկարացին էր նախագահ: Վարագդատ և ընկերներ կը կարծեին, որ Բիւրօն կ'ուզէ Գործ.[ադիր] Մարմինը իր ձեռքը խաղալիք դարձնել, այդ պատճառով ալ անոր տեսակէտներուն միշտ կը հակառակեին և հակառակ իրենց ըրած առաջարկութեան՝ վերջերը սկսած էին նահանջներ ունենալ: Մի ժամանակ ստեղծուած էր արդէն բաւական ծանր և լարուած դրութիւն, տեղի ունեցաւ խառն ժողով մը, ուր դրուած էր Բիւրօի մէկ առաջարկը այդ հարցի վերաբերեալ (արևմտահայեր պարլամենտ ընդունելու մասին): Ձայները կէս առ կէս բաժնուեցան: Դրամբեան առաջարկեց նախագահին կէս ձայնի առաւելութիւն տալ, այդ առաջարկը ընդունելով՝ Բիւրօի առաջարկն ալ ընդունուած եղաւ: Բայց ատկէ վերջ՝ նորէն Գործ.[ադիր] Մարմնի դիւանը նամակ կը գրէ վարչապետին՝ յայտնելով անոր, որ արևմտահայերու միակ իրաւատէրը ինքն է: Այդ խնդիրները յարգարելու համար Բիւրօն երեք անգամ գրաւոր թէ բերանացի կերպով դիմում կը կատարէ Գործ.[ադիր] Մարմնին, որ ժողովի գան, բայց Վարագդատ, Պուկարացի, Սմբատ և Դրամբեան կը մերժեն կտրականապէս ժողովի երթալ:

Յանցաւոր է նաև Վանի կօմիտէն, որ մասսային մէջ պրօպագանդ մղած է պարլամենտական ընտրութիւններուն չմասնակցելու: Վանի կօմիտէի գործերը կը վարեին մասնաւորաբար Խլղաթեան, Կօստեան, որոնք արդէն մի տեսակ չեզոքացուած էին իրենց վատ գործունէութեան հետևանքով: Այս գործունէութեան մասնակցած է նաև Վարագդատը: Պուկարացին շատ գործի չէր խառնուեր այդ ատենները, Սմբատը Պէօիք Վէտի²⁶ գացած էր, իսկ Դրամբեան՝ չէզոք կը մնար: Վանի կօմիտէն հակառակ Բիւրօի կամքին՝ ուզած է Վանի Կ.[ենտրոնական] կօմիտէ ստեղծել: Պողոսեան, Էյնաթեան, Պէյլէրեան գործած են այդ ուղղութեամբ:

Կօստեան և Խլղաթեան աշխատած են նաև Վանի Ա. և Բ. գնդերը կազմաւորածել, որոնք պիտի երթային Վանին օգնութիւն: Մի քանի անգամ այդ գնդերը կազմուած և յետոյ կազմաւորուած են, շնորհիւ այդ մի քանի պարոններու: Երբ Տիգրան Պաղտասարեանի ղեկավարութեան ներքև Դ. գունդը Վանէն այստեղ

26 Այժմ ՀՀ Արարատի մարզի ք. Վեդի:

եկաւ, և երբ նա անգամ մը շատ նեղ դրութեան մէջ կը գտնուէր Դաւալուի²⁷ մէջ, դիմում եղաւ Կօստանին, որ 200 հոգիով օգնութեան հասնի անոր, բայց նա մերժեց: Վերջը լսեցինք, որ գունդը թշնամիի շղթան պատռեր և հասեր է Ղամարլու:²⁸ Երբ Տիգրանը որպէս հրամանատար իր գունդի գործերը կ'աշխատէր կարգադրել՝ Կօստան միշտ աշխատած է արգելք լինել անոր գործերուն:

Անդրանիկի հարց երևան կելլէ այդ ատեն: Ապահովութեան Խորհուրդի անդամները, Խղաթեան, ևլն., կուզեն իրենց ոյժերով Անդրանիկի զինուորներուն միանալ Նոր Պայագետ²⁹, երբ այդ արգելած էր Ազգ.[ային] Խորհուրդը: Անոնք սկսան պրօպագանդալ ալ մղել, թէ արևմտահայեր պէտք չէ կռուեն, քանի որ այս իրենց հողը չէ, անոնք պէտք չէ Դիլիջանի շրջանը երթան: Շնորհիւ այդ պրօպագանդի՝ իրենց մօտ հաւաքուած 600 զինուորները դասալիք կը լինեն, մօտ 1.000 հոգի ալ՝ Դ. գնդի մէջէն դուրս կուգան, կը դիմեն Ախտա³⁰, անկէ ալ Ն.[որ] Բայագետ՝ Անդրանիկին միանալու համար: Արմէն Սասունին երբ Ն. Բայագետ կը հասնէ, այն տեղէն հեռագրով կ'իմացնէ Արամին³¹, թէ Դ. գնդի բոլոր զինուորները փախած են:

Հայկակ Կօստան՝ ուզելով առանձին արևմտահայ զօրամասեր կազմել, գացած է Տիգրանին³² և խորհուրդ տուած է անոր Ապահովութեան Խորհուրդին ենթարկուել: Նա այդ նպատակով գացած է նաև Ախտա՝ այնտեղ գտնուած արևմտահայ զինուորականներու հետ ժողով ունենալու համար և թելադրելու անոնց, որ այսուհետև ենթարկուեն Ապ. [ահովութեան] Խորհուրդի Զին. [վորական] Մարմնի թելադրանքին, իսկ այստեղ Խղաթեան Ապահովութեան Խորհուրդի գրասենեակին մէջ կը հաւաքի բազմաթիւ դասալիք հարիւրապետեր և անոնց կըսէ, թէ զինուորներուն մօտ գտնուած բոլոր զէնքերը պէտք է հաւաքուեն և յանձնուեն Ապահովութեան Խորհուրդին, թէ զինուորները պէտք չի ծառայեն այնտեղ, որովհետև Ազգ.[ային] Խորհուրդը կը շահագործէ զանոնք, Դիլիջանի ճակատը չպէտք է մեր զինուորները երթան, ևլն.: Ես այդ առթիւ Խղաթեանին ըսի, թէ ինք որ այդ յատարարութիւններուն համար պատասխանատու է, բայց նա ինձ պատասխանեց, որ իր այդ մտքերը իր խոր համոզման արդիւնք են և Ապ. [ահովութեան] Խորհուրդը որոշած է: (Այս տեղի կունենար 1918ի ամառը, յունիս 17-18ի ատենները):

Ես այս բոլորը Արամին իմացուցեցի, բայց նա մի տեսակ քաղաքականութեամբ կ'առաջնորդուէր և կտրական դիրք չէր բռնէր անոնց հանդէպ: Այս առթիւ Տիգրան Պաղտասարեանին ալ հեռագրեցի, որ Կօստանին ձերբակալել տայ, բայց մինչև Տիգրանին 50 զինուոր դրկելը, Կօստանը Ա. [պահովութեան] Խորհուրդէն կը փախի և կուգայ հոս: Երբ ես այստեղ տեսայ Կօստանը՝ յայտնեցի իրեն, որ պէտք է դասալիք զինուորները հաւաքի և մեզ յանձնի, ինչպէս նաև՝ իրենց պահեստները: Նա ինձ պատասխանեց, սակայն, որ ձեզ չենք ենթարկուէր երբեք և երբ դուք 50 զինուոր մեր դէմ հանէք՝ մենք 100 զինուոր կը հանենք ձեր դէմ: Ես Տիգրան Պաղտասարեանին դիմեցի և խնդրեցի 20 զինուոր իմ տրամադրութեան տակ դնել՝ օրինական ճամբով Ապ. [ահովութեան] Խորհուրդի զէնքերը և պահեստները ստանալու համար, միաժամանակ առաջարկեցի, որ լուծուած յատարարէ Ապ. [ահովութեան] Խորհուրդը: Այս առթիւ Բարունակը դիմում է կատարած Կօստանին, բայց այդ ևս օգուտ չէ ըրած: Հարկ եղաւ սպառնալ Կօստանին

27 Այժմ՝ ՀՀ Արարատի մարզի Արարատ գյուղ:

28 Այժմ՝ ՀՀ Արարատի մարզի ք. Արտաշատ:

29 Այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզկենտրոն, ք. Գավառ:

30 Այժմ՝ ՀՀ Կոտայքի մարզկենտրոն, ք. Հրազդան:

31 Նկատի ունի Արամ Մանուկյանին:

32 Նկատի ունի վերոնշյալ Տիգրան Բաղդասարյանին:

և ընկերներին, վերջապէս վերջիններս տեղի տուին և ինձ յանձնեցին 124 հրացան, պահեստի 4 գնդացիներ, զոր յանձնած եմ Դ. գնդին, իսկ մնացեալ պահեստը յանձնուած է Ապ.[ահովութեան] Խորհուրդին: Կարապետ Պէյլերեանի տանը տակաւին մնացած էր 60 հրացան, զոր չգիտեր ինչ ըրած է: Այնուհետև, Ապահովութեան Խորհուրդը ինքզինք լուծուած յայտարարեց: Չնոռնամ նաև ըսել, որ ասկէ առաջ Ազգ.[ային] Խորհուրդին Դ. գնդի կողմէ Տիգ.[րան] Պաղտասարեանի ստորագրութեամբ դրկուած է մեղադրական ակտ մը՝ Կօստանը ձերբակալել տալու համար, ցոյց տալով այնտեղ, թէ նա Դ. գնդի կազմալուծման գործին մէջ ինչ դեր խաղացած է: Որչափ գիտեմ՝ Կօստանը մերժած է նաև Արևմտ.[ահայ] Խորհուրդի ներկայացուցիչ Կարօ Սասունիին հաշիւ տալ: Պէյլերեանը ևս Ապահովութեան Խորհուրդի անդամ ըլլալով՝ համակարծիք եղած է իր ընկերներու տուած բոլոր քայլերուն:

Հ.Յ.Դ. Դատ.[ական] Ատեանի
Անդամներ՝ Մերուժան Օզանեան [ստորագրություն]

67-րդ նիստ

31 Մարտ 1920

Ներկայ էին՝ Յովսէփ Տէր-Դաւթեան, Լևոն Թաղէոսեան, Կորիւն Ղազազեան, Մերուժան Օզանեան:

Օրակարգ

Կասում Պէկօվի սպանութեան հարց:

Լուծում

Դատ.[ական] Մարմնիս անդամներէն ընկ. Կորիւն Ղազազեան³³ Թիֆլիսէն այստեղ ժամանած ըլլալով՝ հրաւիրուեցաւ մեր նիստին, որպէսզի Կասում Պէկօվի սպանութեան մասին մեզ տայ ցուցմունքներ: Ընկ. Կորիւն հետևեալ ցուցմունքները տուաւ այդ մասին.

«Սպանութեան ժամանակ ես հոն չէի, ոչ ալ՝ այդ խնդրի քննութեան ժամանակ: Ստոյգ ուրեմն ոչինչ չգիտեմ: Բայց տեղեկութիւն ունեմ, որ Կ.[ենտրոնական] կօմիտէի որոշմամբ եղած է: Սմբատ Խաչատրեան կըսէ, որ Կ.[ենտրոնական] կ.[ոմիտէի] անդամներու լրիւ կազմ չկայ եղեր: Մօտ 2-3 ընկերներ կային եղեր, երբ այդ որոշումը տրուեր է:

Երբ մենք մեր հետախուզական աշխատանքները կը կատարեինք՝ հասկցանք, որ Կասում Պէկօվ Ադրբեջանի համար ծանօթ դէմք է եղել, ասոր վրայ՝ մենք սկսանք ուշադրութեամբ հետևել անոր քայլերուն»:

Դատական Ատեանս որոշեց, որ ընկ. Կորիւն այս մասին մանրամասն տեղեկութիւններ ստանալով Թիֆլիսի Կ.[ենտրոնական] կօմիտէէն՝ զանոնք մեզ փութացնի:

Հ.Յ.Դ. Դատ.[ական] Ատեանի
Նախագահ՝ [առանց ստորագրության]
Անդամներ՝ [առանց ստորագրության]

33 **Ղազազյան Կորյուն Ալեքսանդրի** (1892, Գյումրի-1937, Ախալցխա) – խմբագիր, իրավաբան: 1920-ական թվականների սկզբին եղել է ՀՅԴ Կրաստանի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ: Աքտորվել է Սիբիրի Տոմսկի մարզի Ալեքսանդրովսկի շրջան, 1935 թ. կրկին ձերբակալվել է և դատապարտվել 3 տարվա ազատազրկման:

3 Ապրիլ 1920

Ներկայ էին՝ Յովսէփ Տէր-Դաթեան, Լևոն Թաղէոսեան, Մերուժան Օզա- նեան:

Օրակարգ

Վ. Տէրօեանի և Գործադիր Մարմնի հարց,

Տիգրան Դևօեանի հարց:

Լուծում

Արևմտահայ Գործադիր Մարմնի և Վարագդատ Տէրօեանի մասին տեղեկու- թիւներ ստանալու համար հրաւիրուած էր ընկ. Հմ. [այակ] Մանուկեան, որ այդ առթիւ տուաւ հետևեալ ցուցմունքները.

«Վարագդատ Տէրօեանը ուսուցիչ էր Վանի վարժապետանոցին մէջ [1]914-15- ի շրջանին: Ճանաչուած էր դաշնակցական, բայց կուսակցական ժողովներու եր- բեք չէր գար: Մի օր անոր աշակերտներէն մէկը – Տիրան Թորգոմեան, եկաւ ու ինձ դժգոհութիւն յայտնեց ըսելով, որ Վար. Տէրօեան այնպիսի լեզուով մը կը խօսի մեզ հետ, որ կարծես դաշ. [նակցական] չէ: Աշակերտներուն կըսէ եղեր, որ կուսակցական պէտք չէ ըլլալ: Տիրանը կը խօսեր իր միւս ընկերներուն կողմէ ալ: Արամն³⁴ ալ շատ դժգոհ էր Վարագդատէն:

Վազգենի³⁵ եղբայրն ըլլալով և իսկական դաշնակցական ընկերներու միջա- վայրի մէջ ապրած ըլլալով՝ շատերը մի տեսակ բնական գուրգուրանք մը ունեին Տէրօեանի վրայ, և նա այնպէս կը կարծեր, որ կարելի է առանց ունէ աշխատանքի ալ դաշնակցական դառնալ:

Առհասարակ ան տեղական ընկերներու և կուսակցական բարձր մարմիննե- րու հանդէպ բացասական և արհամարհական դիրք կը բռներ: Շատեր այնպէս կը կարծեին, որ նա իրօք Դաշնակցութեան հակառակորդ մըն է:

Արևմտահայ Բ. համագումարի ժամանակ ես այստեղ չէի: Այստեղ հասնելէս վերջ միայն լսեցի, որ համագումարը ընդունած է Մ. [իացյալ] Հայաստանի սկզբունքը: Ատկէ յետոյ՝ Գործ. [ադիր] Մարմինը կ'ուզէ իրականացնել այդ սկզբունքը 12 արևմտահայեր պարլամէնտ մտցնելով: Վարագդատ և իր ընկերա- կիցները ջերմ պաշտպան եղած են այդ սկզբունքին, Վարագդատը նոյնիսկ այդ ուղղութեամբ դասախօսութիւն մըն ալ ըրած է: Բայց օրէն մէկը՝ յանկարծ Վա- րագդատը փոխուեցաւ, երբ իրեն հարցուցի թէ ինչ բանի արդիւնք է այդ փոփո- խութիւնը, պատասխանեց, որ թոյլ չեն տուեր իրենց, որ իրենք իրենց ուզածին պէս միութիւն յառաջ բերեն: Ես կը կարծեմ, որ Բիւրօն քիչ մը անտակտ շարժած է և չէ կրցած պէտք եղածին պէս օգտագործել այդ տղաքը: Մի օր Գործ. [ադիր] Մարմինը պարլամէնտական բոլոր ֆրակցիաներուն դիմած է երկու հատուածնե- րու միացման մասին անոնց գրաւոր կարծիքը ստանալու համար: Ամենքն ալ պա- տասխանած են դրական կամ բացասական մտքով, բայց դաշ. [նակցական] ֆրակ- ցիան չէ պատասխանած և այդ շատ վատ ազդած է ընկերներուն վրայ: Եւ այդ միացումը կատարուած է շատ հապճէպ: Երբ Բիւրօն աստկէն անդկէն նամակներ կտանայ միացումը օր առաջ ի գլուխ հանելու համար, յանկարծ ան այդ մասին

34 Նկատի ունի Արամ Մանուկյանին:

35 Վազգեն (Տիգրան Տերոյան) (1873, Վան – 1898, գ. Կոռուբաշ, Վանի նահանգ) – ազգային- ազատագրական պայքարի անվանի գործիչ: ՀՅԴ անդամ: Մարտնչել է Նիկոլ Դումանի և Գուրգենի խմբերում: Մասնակցել է 1896 թ. Վանի «մեծ դեպքին»: Կազմել է ընդհանուր ապստամբության առաջին հրահանգը: Զոհվել է Վանից ոչ հեռու գտնվող Կոռուբաշ գյուղի ջրաղացում, երբ թուրքերը պաշարել էին նրան և իր զինակից ընկերներին:

2 (ժԲ) քառի, թիվ 4 (48) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2014 ՎԷՆ համահայկական հանդես

որոշում կուտայ և գայն կը պարտաւորեցնէ, Գործադիր Մարմնին: Բիւրօս գործին հետ լրջութեամբ չէ վարուած: Այսօր այդ ընկերներէն շատերը կըսեն, թէ Պօղոս Նուպարին այնքան զիջողութիւն ցոյց տրուեցաւ, որ եթէ ատոր 1/10-ը մեզ ցոյց տրուեր՝ մենք Բիւրօսի առաջարկներուն համակերպած պիտի ըլլայինք:

Մնբատ և Արմէն Սասունի գացած են Պիչի և Թօմարնի մօտ, բայց այդ եղեր է կառավարութեան համաձայնութեամբ: Առհասարակ, Գործադիր Մարմինը իր բոլոր ձեռնարկներուն համար կը խորհրդակցէ եղեր կառավարութեան հետ: Վար. Տէրօեան կ'ուզէ եղեր, սակայն, որ պետական գործերուն չմիջամտէ երբեք կուսակցութիւնը: Անդրանիկին ևս դիմում կատարուեր է առանձին զօրամասեր ստեղծելու համար, բայց այդ գործին մէջ ևս կայ եղեր կառավարութեան համաձայնութիւնը:

Գործ.[ադիր] Մարմինը բացասական դիրք բռնած է նաև Տիգրան Պաղտասարեանի զօրամասին դէմ: Գործ.[ադիր] Մարմինը կ'ուզեր, որ կազմուելիք զօրագունդը իր տրամադրութեան տակ մնա և ամբողջապէս իրեն ենթարկուեն: Ան նամակ գրած է նաև Տիգ. Պաղտասարեանին՝ քննադատելով գայն խստիւ, որ իրեն չենթարկուեր:

Վանի կօմիտէի մի շարք ընկերները պարլամէնտական ընտրութիւններուն հանդէպ ալ լաւ չեն տրամադրուած: Անոնք նոյնիսկ մասսային մէջ այդ ուղղութեամբ պրօպագանդ մղած են: Ունեցեր են ժողովներ, ուր ընկերներ յայտարարեր են, որ իբրև անհատներ կարելի է մասնակցել ընտրութեանց, բայց ոչ՝ իբրև արևմտահայեր: Մէկ ուրիշ դաշնակցական պաշտօնական ժողովի մը մէջ ալ սակայն որոշուած է, որ արևմտահայեր մասնակցեն ընտրութեանց իբրև քաղաքացիներ: Այս բոլոր գործերուն մէջ Վ. Տէրօեան իր մասնակցութիւնը ունեցած է: Առհասարակ, ան կուսակցական տեսակէտէ աննկարագիր մարդ մըն է»:

Կապիտան Մուրադեանի³⁶ ցուցմունքները Դեօեանի մասին:

Նախքան քօնքօն բազմեղկայի³⁷ մէջ մտնելս՝ ինձ կ'ուզէին Ղարաբաղ կամ Պազար Կէշար³⁸ ուղարկել, բայց ի վերջոյ Դրօսի թելադրութեամբ ես մնացի այստեղ և մտայ գեներալի շտապը³⁹: Այստեղ ես գտայ շատ անգործ և աննկարագիր մարդիկ, որոնց հետ գործել կարելի չէր ինձ համար: Ծանօթ էի ես Շնէուրի⁴⁰ հետ, գայն ճանչցած էի Երզնկայի նահանջէն. լաւ մարդ էր սա: Շնէուրը ևս կը գործեր գեներալի շտապին մէջ: Երբ Սիլիկօֆը⁴¹ զիս ուզեց գեներալի շտապին մէջ Շնէուրին տեղը դնել, ես իրեն յայտնեցի, որ պէտք է այդ գործին ամբողջ պատասխանատուն ես լինեմ, գործը ես ինքս վարելու համար, որովհետև ես տեսայ, որ բազմեղկայի գործը իրենք լաւ հիմերու վրայ չէին դրած: Պօլիս և աւելի հեռուները հետախույզներ կը դրկուէին, բայց այստեղ մեր քթին տակ Զանգիպասարում⁴² ինչ կանցներ կը դառնար՝ իրենցից տեղեկութիւններ չէր ստացուեր: Իմ այս ըրած պահանջներուն համար շատեր դժգոհ մնացին ինձմէ:

Անցաւ ժամանակ մը, երբ յանկարծ օր մը Դրօս ինձ ըսաւ, թէ որպէս թէ կը խօսուի եղեր իմ մասին, որ ես անձնական շահեր հետապնդելով՝ խնդիրներ կը սարքեմ եղեր, ինձ խորհուրդ տուաւ գտնել այդ լուրերու հեղինակները: Ես այդ

36 Մուրադեանը Հայաստանի առաջին Հանրապետության բանակի Գլխավոր սպայակույտի հետախուզական բաժանմունքի պետն էր:

37 Ռուսերեն՝ հակահետախուզություն:

38 Այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի ք. Վարդենիս:

39 Գլխավոր շտաբ-սպայակույտ:

40 Ծագումով էլզասցի Ալեքսանդր Շնէուրը Սարդարապատի հերոսամարտի ժամանակ Դանիել Բեկ-Փիրումյանի օգնականն էր: Հուշերի հեղինակ:

41 Նկատի ունի Մովսէս Սիլիկյանին:

42 Այժմ՝ ՀՀ Արարատի մարզի ք. Մասիսն ու հարակից շրջանը:

խնդիրը սակայն պատմեցի Նագարբեկօվին⁴³, տուի նաև զեկույց մը Հախվերդօվին⁴⁴, նկարագրելով այն անտանելի վիճակը, որ գոյություն ուներ մեր բաժանմունքին մէջ:

Երբ ես այդ գործին մէջ մտայ՝ առաջարկեցի նաև, որ Դևօեանը Պօլսէն յետ կանչուի, մենք անոր ստանալիք տեղեկությունները կրնայինք ստանալ Ադրբեջանէն և Թիֆլիսի մեր ընկերներէն: Այդ կերպով նիթական տեսակէտէ ալ մենք կը շահեինք: Տիգրանը Պօլիս աւելի քան ամսական 33.000 թուալի կը ծախսեր, մեր պիտոճէին կէսը գրեթէ: Ատկէ զատ ես կ'ուզեի, որ Տիգրանը՝ որպէս ռազմեկայի գործէն լավ հասկացող մը, այստեղ մնար շարունակ: Դևօեանը կ'ենթարկուեր Շնէուրին, այդ վերջինին հրամայուած էր, որ զայն ետ կանչի, բայց Շնէուրը փոխանակ զայն իսկոյն ետ կանչելու՝ նամակ կը գրէ ըսելով, թէ այստեղ ձեզ կանչելու տրամադրութիւն կայ, բայց ես կ'ուզեմ, որ դուք մնաք: Երբ Շնէուրին տեղ ես անցայ՝ իսկոյն հեռագրեցի Դևօեանին, որ ետ գայ, նա ճամբայ կելլէ, կուգայ Պաթում և լուր կը դրկէ, որ դրամ դրկեն իրեն, որպէսզի ինք այստեղ գայ: Մենք չկրցանք իրեն դրամ դրկել և ան ֆրանսիական ներկայացուցչին միջոցաւ գործը կարգաւորելով՝ կը հասնի այստեղ: Այստեղ մենք իրեն մօտ 300.000 թ. [ուրլի] դրամ վճարեցինք իր ամսականներուն և ճամբու ծախքերուն համար:

(Շարունակելի)

Հ.Յ.Դ. Դատ.[ական] Ատեանի
Նախագահ՝ [առանց ստորագրության]
Անդամներ՝ Մ. Օզանեան [ստորագրություն]

69-րդ նիստ

4 Ապրիլ 1920

Ներկայ էին՝ Յովսէփ Տէր-Դաթեան, Լևոն Թադէոսեան, Մերուժան Օզանեան:

Օրակարգ

Կապիտան Մուրադեանի ցուցմունքները Դևօեանի մասին:

Լուծում

Ես լսած էի, որ Դևօեանին առաջարկ եղած է կամաւորական բանակին⁴⁵ մէջ ծառայել, բայց այդքան միայն, թէ նա ծառայած է կամ ոչ – այդ ես չգիտեմ:

Լսած էի, որ մեր բաժանմունքին մէջ կան մարդիկ, որոնք Ադրբեջանի ու Վրաստանի հետ յարաբերութիւններուն մէջ են եղած: Անգամ մը՝ Բագուի մեր ընկերները ձեռք կը ձգեն պատերազմական ծրագիր մը, որ պիտի գործադրուեր, եթէ Հայաստանի և Ադրբեջանի միջև պատերազմ ծագեր: Այդ ծրագիրը մերոնց ձեռք կիյնայ, մերոնք այդ կուղարկեն այստեղ, այդ ծրագրին հակազդող ուրիշ ծրագիր մը կը կազմուի հոս Զանգեզուր դրկելու համար, բայց ինչպէս կըլլայ՝ մեր այդ ծրագիրը և անոնց ծրագիրը կիյնան Շուշի թշնամիին ձեռքը:

Մի ուրիշ փաստ ևս: Կը ձանձնամ կապիտան Մէդվեդևը, որը ասկէ առաջ մի գորագնդի քիւպին⁴⁶ մէջ կը ծառայեր շատ հասարակ պաշտօնով: Այժմ նա մեր

43 Նկատի ունի Հայաստանի առաջին Հանրապետության բանակի սպարապետ Թովմաս Նագարբեկյանին:

44 Հախվերդյան Հովհաննես Բարսեղի (1873-1937) – ցարական բանակի և Հայաստանի առաջին Հանրապետության ռազմական գործիչ, գեներալ-լեյտենանտ: Եղել է ՀՀ առաջին ռազմական նախարար (15.06.1918-17.02.1919):

45 Նկատի ունի Ա. Դենիկինի գլխավորած հակաբոլշևիկյան բանակը:

46 Ռուսերեն՝ ակումբ:

բաժանմունքին մէջ շատ կարևոր և պատասխանատու գործի վրայ է դրուած:

Շնէուրին գնալու ժամանակ առաջարկեցի, որ իր քով եղած բոլոր թղթերը ինձ յանձնի: Նա խոստացաւ, բայց անցաւ գնաց առանց թղթերը յանձնելու: Իր կինը մինչև այժմ ալ կը մնայ այստեղ, անոր հարցուցի, թէ թղթերը թողնուած են իրեն՝ ժխտական պատասխան ստացայ անկէ: Այս մասին զեկուցել եմ իր ժամանակի գին.[վորական] նախարարին:

Երբ Թիֆլիսէն Եղիազարեանը հոս եկաւ՝ ինձ յայտնեց, որ կապ.[իտան] Մէդվեդևը այնտեղ շատ նեղ վիճակի մէջ կը գտնուի: Հայ-վրացական սահմանա-յին վեճը ճշտելու համար նա մեր կողմէն ներկայացուցիչ կը լինի այնտեղ: Մէդվեդևը անկէ վերջ, երբ հոս կուգայ՝ արդէն հարստացած էր...: Այս պարագան ուրիշներ ալ նկատի առած են: Այս մասին ևս խօսուած է Հախվերդովէն Եղիազարեանի կողմէ:

Երբ Մէդվեդևի մասին Նազարբեկովին ևս կը պատմուի՝ նա շատ կը վիրաւորուի: Նա ինձ յայտնեց, որ երբ Հախվերդովը գայ՝ Մէդվեդևը իր պաշտօնէն կը հեռացնենք:

Այստեղ Մէդվեդևը շարունակ ամենէն վերջը դուրս կ'ելլէ իր պաշտօնատու-նէն: Այս պարագան ևս ինձի և շատ շատերուն լուրջ կասկածներ ներշնչած է:

Գալով Դեօեանին՝ ես զայն նոր եմ ճանաչում և անոր մասին ոչ մի ճշգրիտ տեղեկութիւն չունեմ:

Հ.Յ.Գ. Դատ.[ական] Ատեանի
Նախագահ՝ [առանց ստորագրության]
Անդամներ՝ Մ. Օզանեան [ստորագրություն]

70-րդ նիստ

5 Ապրիլ 1920

Ներկայ էին՝ Յովսէփ Տէր-Դաւթեան, Լևոն Թադէոսեան, Համ.[բարձում] Տէրտէրեան, Մերուժան Օզանեան:

Օրակարգ

Կ. Բարունակեանի հարց,

Կարօ Սասունիի հարց:

Լուծում

Կ. Բարունակեանի հարցի մասին ժողովը թեր ու դէմ մտքերու փոխանակու-թիւն ունենալէ վերջ, նկատի ունենալով, որ այդ 50.000 ռ.[ուրլի] կորուստին մէջ Կ. Բարունակեան անփոյթ և անհոգ վերաբերմունք միայն ցոյց տուած է, որոշեց յանդիմանութիւն ուղղել անոր և միևնոյն ժամանակ թելադրեց, որ ապագային պետական-հասարակական պաշտօներ վարելու ժամանակ որքան կարելի է՝ խոյս տայ դրամական հաշիւներու պատասխանատուութիւնը ստանձնելէ:

Կարօ Սասունիի հարցի առթիւ որոշուեցաւ հարցաքննել նաև ընկ. Ա. Շարա-ֆեանը: Այդ գործը յանձնուեցաւ ընկ. Մ. Օզանեանին:

Հ.Յ.Գ. Դատ.[ական] Ատեանի
Նախագահ՝ [առանց ստորագրության]
Անդամներ՝ [առանց ստորագրության]

7 Ապրիլ 1920

Ներկայ էին՝ Յովսէփ Տէր-Դաթեան, Լևոն Թաղէոսեան, Համբարձում Տէրտէրեան, Մերուժան Օզանեան:

Օրակարգ

Կարօ Սասունիի հարց,

Տիգ. [րան] Դևօեանի հարց:

Լուծում

Կարօ Սասունիի հարցի առթիւ պարտականութիւն դրուած էր ընկ. Մ. Օզանեանի վրայ, որ տեսնէ Ա. Շարաֆեանը և ստանայ անոր ցուցմունքները այս առթիւ: Ահաւասիկ Շարաֆեանի ցուցմունքները.

«Կորիւն, Մինաս, Տիգրան Տէր-Աւետիսեան, ինչպէս նաև Կարօ Սասունի՝ իմ գործակիցներն էին: Կարօն յետոյ գնաց Խնուս-Մուշի շրջանը: Բարեգործականի հաշուին նա ցորեններ կը հաւաքեր, յաճախ ձրի, երբեմն ալ՝ դրամով, թէ որքանը ձրի էր և որքանը դրամով՝ այդ ես այժմ չեմ յիշեր, բայց Կարօն իր հաշիւները ժամանակին մանրամասն կերպով ներկայացուցեր է և մենք ունէ սխալ չենք գտեր անոր մէջ:

Ինչ կը վերաբերի մի «Մի հայ, մի ոսկի»-ին՝ այդ նպատակին համար կար մի մարմին, որուն կը հսկեր Մէսրոպ Եպիսկոպոսը⁴⁷: Ռոստոմը ևս հսկողութիւն կ'ըներ: Այդ մարմնի կողմէ Կարօին ալ դրամ դրկուեր է գերիներ ազատելու համար: Կարօն իր ժամանակին մանրամասն ներկայացուցեր է իր հաշիւները:

Այդ օրերուն Մուրադն ալ այդ շրջանը կը գտնուեր, երբ ան Թիֆլիս եկաւ՝ ինձ սկսաւ գանգատիլ Կարօ Սասունիի մասին՝ ըսելով, որ ան ցորենները ստացած է ձրի, բայց մէկ մասը անոր՝ ձեզ ցոյց տուած է դրամով և այդ մասին գիտէ մշտցի խմբապետ Մանուկը, որ այժմ կարծեմ Զանգեզուր է: Ես յայտնեցի Մուրադին, որ ինք այդ մասին հարց յարուցանէ Բարեգործականի Կեդր. [ոնական] Մարմնին մօտ: Այնուհետև, երբ Կարօն եկաւ՝ յայտնեցի իրեն, որ Մուրադը իրեն դէմ գանգատ յարուցած է և թէ այդ հարցը պիտի քննուի: Կարօն չափազանց վրդովուեցաւ այդ առթիւ և Ռոստոմի և ուրիշ մի քանի ընկերներու, ինչպէս նաև ինձի դիմեց մի քանի անգամ, առաջարկելով, որ անպատճառ քննուի իր խնդիրը: Մուրադը, սակայն, այնուհետև, մեզ չտուաւ ոչ մի փաստ: Ռոստոմն ալ տեսնելով, որ հարցը անկարևոր է և թէ որևէ բան տեղի ունեցած չէ՝ գործի քննութեան չձեռնարկեց: Կարօն այնուհետև մի քանի մշտցիներ, սասունցիներ բերաւ՝ յայտարարելով, որ անոնք գիտեն ինչ-որ անցած-դարձած է Խնուս-Մուշի շրջանը և կրնան ձեզ տեղեկութիւններ տալ: Մենք սակայն խնդրոյն ընթացք չտուինք, որովհետև Կարօն մեզ մօտ 3 տարի ծառայած ըլլալուն՝ վստահութիւն ունեինք անոր վրայ: Գոհ մնացած ըլլալով թէ Կարօի թէ մեր մի քանի պաշտօնեաներու գործունէութիւնէն՝ որոշեցինք նոյնիսկ անոնց ծախքերը հոգալով Կոճոռ դրկել:

Չեմ կարծեր, որ Սամսոն Յարութիւնեան Կարօի մասին դժգոհութիւն ունեցած ըլլայ, մանաւանդ որ Խնուս-Մուշի շրջանի գործունէութեան ես կը հսկեի, երբ Սամսոնը մի դժգոհութիւն ունեցած ըլլար՝ անպատճառ ինձ կը գրեր»:

Խէչօ Մուրադեան և Տիգրան Եզօեան նամակով մը մեզ դիմած էին յայտարարելով, որ 1914-ին Դևօեանի յանձնարարութեամբ իրենք Մանազկերտէն դէպի

2 (ՃԲ) փարի, թիվ 4 (48) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2014 Վէմ հասանալիական համդես

47 Մէսրոպ Տէր-Մովսիսյան (7.05.1865, գ. Շիկահող, ՀՀ Սյունիքի մարզ-3.06.1939) – արքեպիսկոպոս, հայագետ, հասարակական գործիչ: Հայկական կամավորական ջոկատների կազմավորման գործի ղեկավարներից, նյութական և բարոյական աջակցություն է ցույց տվել արևմտահայ գաղթականներին:

Մուշ-Սասուն մեկնած էին: Դևոեան անոնց խոստացեր էր իբրև վարձք 4-500 ռ. [ուբլի], բայց ի վերջոյ տուեր է 35 ռ. [ուբլի]: Անոնք կը յայտնեին նաև, որ Դևոեան երկու քիւրդ պէկեր – Ապտուլլահ և Հիւսէին, ազատ արձակած է՝ փոխարեն ստանալով կարմիր քուռակ մը, ձի մը, 10-15 գլուխ պանիր, իսկ թէ որքան փող՝ այդ իրենք չեն գիտեր: Քիւրդերուն հետ նա երկար բանակցած ալ է:

Որոշուեցաւ Դևոեանի հարցի քննութեան համար մեր յաջորդ ժողովին կանչել թէ վերոյիշեալ երկու պարոնները և թէ Կարօ Սասունին:

Հ.Յ.Դ. Դատ.[ական] Ատեանի
Նախագահ՝ [առանց ստորագրության]
Անդամներ՝ [առանց ստորագրության]

72-րդ նիստ

8 Ապրիլ 1920

Ներկայ էին՝ Յովսէփ Տէր-Դաւթեան, Լևոն Թաղէոսեան, Մերուժան Օզանեան:

Օրակարգ

Կարօ Սասունիի ցուցմունքները Դևոեանի մասին:

Լուծում

Ընկեր Սասունի Դևոեանի դէմ իր ըրած ամբաստանութեանց առթիւ հետևեալ ցուցմունքները ըրաւ.

«Ինչ որ ես կըսեմ՝ յանձնաժողովի կողմէ կըսեմ: Երբ մեր յանձնաժողովը՝ ուր կային Մինասը, Տիգրանը և ես, գնաց Մանազկերտի շրջանը, քննութիւն կատարելով հաստատեց, որ Դևոեան մօտաւորապէս 20.000 փութ ցորեններ հաւաքած է գիւղացիներէն, անոնցմէ ոմանց ստացականներ տուած է՝ թէ ձեր դրամը կուտամ ի վերջոյ, բայց ոչ մէկին դրամ չէ տուած, յետոյ ինքը այդ ցորենները դրամով ծախած է: Այդ մասին կարող են վկայել Մխիթար Դարմանեան (Ալէքսանդրապօլ), Միքայէլ Տէր-Գէորգեան (Երևան), Արշակ Մանուկեան, Միհրան Գրիգորեան (Ալէքսանդրապօլ): Այդ գործիչները այդ մասին մեզ տուած են ցուցմունքներ: Մեր լսածներու մասին մենք կազմեցինք արձանագրութիւն, և գոնէ ուր կար կուսակցական ժողով՝ տուինք Ռոստոմին և Արմէն Գարոյին: Դևոեանի հաւաքած այդ ցորենները թալանի ապրանք էին, հայերն ալ թուրքերէն առած էին զանոնք: Այդ ցորենները գիւղացիներու սայլերով կը փոխադրուէին, որոնց համար Դևոեան դրամ չէր տար:

Դևոեան թուրքերու հետ ալ շարունակ յարաբերութեան մէջ էր: Մանազկերտի մօտ գիւղ մը կա, ուր թուրք պէկեր և մարդասպաններ կ'ապրէին, Դևոեանը շաբաթը երկու անգամ անոնց մօտ կ'երթար և մինչ մեր ընկերներ կ'ուզէին այդ գիւղը քարուքանդ ընել՝ Դևոեան այնտեղի թուրքերէն ոսկի դրամներ կաշառք կ'առնէր, այս մասին կրնան վկայել իր արբանեակները:

Դևոեան թուրքեր ալ սահմանին այն կողմը անցուցած է: Այս հարցը յարուցեց գլխաւորաբար Միք. Դարմանեանը: Երկու նշանաւոր քիւրդեր կային՝ հարուստ և ոճրագործ մարդիկ էին: Դևոեան զանոնք ղրկած է՝ իր ըսելով իբրև լրտեսներ, բայց երբ անոնք չվերադարձան՝ Դևոեան սկսաւ ըսել, թէ զանոնք ճամբան սպանել պիտի տայ:

Թէ նահանջը Դևոեանի սխալ ցուցմունքներուն վրա տեղի ունեցած է՝ այդ մա-

սին կը վկայեն Բիւրօն, Ռուբէնը, Փափազեանը⁴⁸: Նահանջէն առաջ, երբ մենք շարունակ կըսեինք, թէ թուրքերու թիւը պակաս պէտք է ցոյց տալ ռուսներուն՝ Դևօեան մեզ չէր լսեր:

Մշոյ մեր ընկերներուն ճշգրիտ տեղեկութիւններ ալ տուած չէ ան: Այդ մասին մեզ խօսած են Տիգրան Գաւասեան և ուրիշներ: Նա ոչ մի տեղեկութիւն չէ տուած իր կողմէ, չէ ըսած և թէ նահանջի ժամանակ ինչ պէտք է ընեն, միայն անոնց դրութեան, գիտութեան վիճակի մասին հարցումներ ըրած է իր ռազմավարական հարցերը աւելի լաւ կազմակերպելու համար»:

Հ.Յ.Դ. Դատ.[ական] Ատեանի
Նախագահ՝ [առանց ստորագրության]
Անդամներ՝ [առանց ստորագրության]

73-րդ նիստ

17 Ապրիլ 1920

Ներկայ էին՝ Յովսէփ Տէր-Դաւթեան, Համբարձ.[ում] Տէրտէրեան, Մերուժան Օզանեան:

Օրակարգ

Դևօեանի հարց,

[Սարգիս] Մանասեանի և Արտուշ Քոչարեանի հարց,

Պօլօեան Արշակի հարց:

Լուծում

Դևօեանի հարցի առթիւ ընկ. Մ. Օզանեան յայտնեց, որ ինք Խէչօ Մուրադեանը հարցաքննած է, որը հաստատած է իր նամակի մէջ յայտնած միտքը: Դևօեան 5.000 ռ.[ուբլի] խոստացեր է Խէչօ Մուրադեանին և իր ընկերոջ՝ կարևոր ձեռնարկ մը ի գլուխ հանելու համար, բայց ի վերջոյ անոնց տուեր է 35-40 ռ.[ուբլի]: Ատեն գատ, Դևօեան կաշառք ստանալով՝ երկու ծանօթ քիւրդեր սահմանէն անդին անցուցեր է: Խէչօ Մուրադեան վկաներ ցոյց տուաւ Արշակ ...եան⁴⁹ և Տէր Յովհաննէսին, որոնք Ալէքսանդրապօլ կը գտնուէին, ինչպէս նաև՝ Սեդրակ (ջուլիականոցի կառավարիչ) և Համբարձում (ամերիկացիներու մօտ հաշուապահ), որոնք կը գտնուէին Երևան: Որոշուեցաւ այս վերջին երկուքը հրաւիրել մեր նիստերէն մէկին և հարցաքննել:

Կարդացուեցան Արտուշ Քոչարեանի և Մանասեանի Դատ.[ական] Ատեանին տուած պատասխանները: Որոշուեցաւ յաջորդ մեր նիստին գանոնք երկուքն ալ հրաւիրել և լրացուցիչ տեղեկութիւններ ստանալ:

Ընկ. Արշակ Պօլօեան Ալէքսանդրապօլէն նամակով մը դիմած էր Բիւրօին, որպէսզի իր շուրջ եղած տարածայնութիւնները քննուեն: Բիւրօն առանձին նամակով մը այդ թուղթը մեզ յղած էր՝ առաջարկելով այդ մասին քննութիւն բանալ: Որոշուեցաւ այդ նամակը Բիւրօին դարձնել և պահանջել անկէ, որ կամ ինքը կամ Պօլօեանը մեզ յայտնեն, թէ եղած տարածայնութիւնները ինչ բանի շուրջ են, առանց այդ մասին մանրամասն տեղեակ դառնալու՝ չի կարելի քննութիւն բանալ:

Հ.Յ.Դ. Դատ.[ական] Ատեանի
Նախագահ՝ [առանց ստորագրության]
Անդամներ՝ Մ. Օզանեան [ստորագրություն]

48 Նկատի ունի Վահան Փափազյանին:

49 Բնագրում այսպէս է:

ԱՐԽԻՎ

2 (ՃԲ) քաթի, թիվ 4 (48) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2014

Վէմ համահայկական համըն

16 Ապրիլ 1920

Ներկայ էին՝ Յովսէփ Տէր-Դալթեան, Համ. Տէրտէրեան, Մերուժան Օզանեան:
Օրակարգ

Արևմտահայ Գործ.[ադիր] Մարմնի մասին Սահակ Տէր-Թովմասեանի և Արմենակ Մաքսապետեանի ցուցմունքները,

Կարօ Մասունիի հարց,

Բարունակեանի հարց,

Դարաշիջակի⁵⁰ որբանոցի պաշտօնեաներու յարուցած հարցը Շահբազեանի դէմ:

Լուծում

Սահակ Տէր-Թովմասեանի ցուցմունքները

«Համագումարի նախապատրաստական աշխատանքներու ժամանակ ես այստեղ չէի գտնուեր: Փետր.[վարի] 3-ին Երևան եկայ: Նախքան համագումարը՝ մեր բոլորիս ցանկութիւնը այն էր, որ Արարատեան Հանրապետութիւնը դառնայ Հայաստանի Հանրապետութիւն: Երբ համագումարը տեղի ունեցաւ՝ Միացեալ Հայաստանի գաղափարը ընդունուեցաւ, մենք ուզեցինք համագումարէն բխած գործադիր մարմին մըն ալ ունենալ, որ մեր և համագումարի բաղձանքները իրականացնէր: Գործադիր Մարմնի մէջ մտցուցինք մեր մի քանի ընկերները: Չմոռնամ ըսել, որ այդ ժամանակ մեր բոլոր կուսակցական մարմինները կը գործէին շատ համերաշխ:

Գ.[ործադիր] Մարմինը սակայն իր ընտրութիւնէն վերջ՝ սկսաւ հակառակ քաղաքականութիւն վարել: Սկիզբէն ձիշտ է՝ քուէարկուած տեսակէտներուն մօտ էր կանգնած, բայց յետոյ սկսաւ նահանջել: Մարմնի անդամները կըսէին, որ Հայաստանի Խորհուրդը պիտի լուծուի արդէն, այլևս ուրեմն պէտք չկայ մասնակցելու: Հակառակ կառավարութեան բարեացակամ վերաբերմունքին՝ Գործադիր Մարմինը սկսաւ օտար միսիաներու հետ յարաբերութեան մէջ մտնել:

Մտադրութիւն կար զինուորական ոյժեր կազմակերպելու: Դիմում կըլլայ ատոր համար Տիգրան Պաղտասարեանին: Կառավարութիւնն ալ ատոր համաձայն էր, բայց երբ յետոյ կառավարութիւնը ինքը հրաւիրեց Պաղտասարեանին և սկսաւ թելադրութիւններ ընել սկսուելիք ձեռնարկի մասին՝ Գործադիր Մարմինը զայրացաւ, որովհետև ան կ'ուզէր կազմուելիք արևմտահայ զօրամասերը բացարձակապէս գտնուելին իր տրամադրութեան տակ:

Մայիս 28-ի ակտը: Բոլորս համամիտ էինք կառավարութեան այդ քայլին, բայց ոչ մէկս չէինք կարծեր, որ այդքան շուտ պիտի լինէր այդ: Որ մենք այդ մասին կատարելապէս բաղձացող էինք՝ այդ կը վկայեն «Աշխատանք»-ի մէջ հրատարակուած բազմաթիւ գրութիւնները: Մենք դէմ էինք նաև Պօղոս Նուպարի պատուիրակութեան, ուր չկային մեր ներկայացուցիչները:

Մայիս 25-26-ին Բիւրօն միտք կը յղանայ Հայաստանի անկախութեան տարեդարձին առթիւ, միացման յայտարարութիւնն ալ ընել: Գործադիր Մարմինը, Բիւրօն և Կ.[ենտրոնական] կ.[ոմիտե]ն ևս այդ ուղղութեամբ մտածած էին: Կը լինի ժողով, ուր ընկերները կ'զբաղեն այդ հարցով: Գործադիրի անդամները այդտեղ երկու մասի կը բաժանուեն: 12 ընկերներու ցանկը պիտի պատրաստուեր, որոնք մեր կողմէ պիտի երթային պարլամէնտ: Չափազանց հապճէպ կերպով պատրաստուեցաւ այդ ցանկը: Վարազդատ, Սմբատ, Դրամբեան, Պուլկարացի

50 Այժմ՝ ՀՀ Կոտայքի մարզի ք. Ծաղկաձոր:

Գրիգոր չհամաձայնեցան այդ ցանկին մեջ մտնել: Կարծեմ ատկե՛ վերջ՝ անոնք նորէն կառավարութեան գրեր են, թէ ըստ առաջնոյն կը գործէ Գործադիր Մարմինը, և որ կառավարութիւնը պէտք է շարունակէ նորէն իր յարաբերութիւնը պահպանել անոր հետ:

Այս դէպքերէն վերջ՝ մեր կառավարական⁵¹ շարքերուն մեջ սկսաւ մի խուլ պրօպագանդ: Վանեցիները կատեղծեն Վանի կօմիտէն, որ չճանաչեր Երկրի Կ. [Ենտրոնական] կօմիտէն և կ'ուզէ դառնալ Վասպուրականի Կ. [Ենտրոնական] կօմիտէ, Վանի կօմիտէի ընկերները կը գրեն նոյնիսկ Բիւրօին, թէ պարլամէնտ ու դարկուած 12 պատգամաւորները պէտք է ետ կանչուեն և միացման ակտը չեղեալ յայտարարուի:

Մօտեցան պարլամէնտական ընտրութիւնները: Կ. [Ենտրոնական] կօմիտէն, Երկրի ներկայացուցչական ժողովը կ'որոշեն որպէս դաշնակցականներ մասնակցել ընտրութեանց: Վ. Տէրօեան, Խլղաթեան սակայն կ'աշխատեն վիժեցնել ընտրութիւնները: Արևմտահայ դաշնակցական ընկերներու շրջանակի մը մեջ Վարազդատ շատ տաք ճառ մը կը խօսի՝ թելադրելով ընտրութեանց չմասնակցել: Ծեծ ու կռիւ կը լինէր այդ ժողովին մեջ, եթէ ունէ մէկը փորձեր հակաճառել Տէրօեանին, լսած եմ, որ Խլղաթեան ևս շատերու ձեռքէն ընտրութեանց թղթիկները առած-պատռած է: Բժիշկ Տէր-Պօղոսեան և Վանի կօմիտէի միւս ընկերները ևս բացասական դիրք բռնած էին ընտրութեան հանդէպ: Ա. Մաքսապետեանի նախագահութեան տակ ևս Վանի կօմիտէն ունեցած է ժողով մը, ուր ընտրութեանց չմասնակցելու համար բանաձև մըն ալ հանուած է»:

Ա. Մաքսապետեանի ցուցմունքները:

Մայիս 10-ին հասայ այստեղ: Տեսնելով, որ Վանի մեր ընկերները չեն կազմակերպուած՝ ես զանոնք կազմակերպեցի Վանի կօմիտէութիւն անունին ներքև: Տեղի ունեցաւ ատկե՛ վերջ արևմտ. [ահայ] Ռայոնական ժողովը, որուն նախագահներ ընտրուեցան Քրմօյեան և ես: Քրմօյեան ժողովի ընթացքին ընկերներու հետ կռուեցաւ, այդ պատճառով ալ ժողովէն չընտրուեցաւ, և անկէ վերջ՝ անոր անունը պարլամէնտի ընտրական ցանկին մեջ չմտաւ: Մեր ընտրական ժողովին ներկայ էին Ռուբէնը, Դրօն և Զամալեանը:

Մայիս 28-ի օրը ինձ յայտարարուեցաւ, որ պարլամէնտ պէտք է երթամ: Ռուբէնի պնդումով միայն ես մտայ պարլ. [ամենտ], պայման դնելով, որ ես նկատուեմ որպէս Դաշնակցութեան թեկնածուն և ոչ իբրև՝ Գործադիր Մարմնի թեկնածու: Այս ակտի յայտարարութիւնը իրօք այնքան հապճէպ եղաւ, որ նոյնիսկ մեր պարլ. [լամենտական] ֆրակցիայի նախագահ Մարտիրոս Յարութիւնեանը⁵² ևս Բիւրօի առած այդ հապճէպ քայլի համար իր զարմանքը յայտնեց ժողովի մեջ:

Իմ նախագահութեան տակ ձիշտ է, որ Վանի կօմիտէն ունեցած է ժողով մը, ուր ընտրութեանց առթիւ ընկերներ արտայայտուեցան: Անոնցմէ ոմանք դէմ ալ արտայայտուեցան, և երբ այդ ուղղութեամբ բանաձև առաջարկուեցաւ՝ ես զայն քուէարկութեան չդրի, բայց կարծեմ Օննիկ Մխիթարեանն ու Խլղաթեանն էին, որ պնդեցին և եղած առաջարկի առթիւ վեր բարձրացած մատերը սկսան հաշուել: Այդ ատեն մի քիչ աղմուկ, իրարանցում եղաւ, որմէ անմիջապէս վերջ ժողովն ալ փակուեցաւ:

Գործ. [ադիր] Մարմնի անդամ Դրամբեանին ես լաւ կը ճանչնամ, ձեմարանին⁵³ մեջ նա սոց. [իալ] դէմօկրատ էր, և կը զարմանամ, որ նա ի վերջոյ ինքզինք դաշ-

51 Թերևս՝ կուսակցական:

52 Հարությունյան Մարտիրոս Հարությունի (1875-1938) - 1920 թ. փետրվար-դեկտեմբերին ՀՀ դեսպանը Ադրբեջանում:

53 Նկատի ունի Էջմիածնի Գևորգյան ձեմարանը:

նակցական է յայտարարեր:

Վարազդատը նոյնպէս ճեմարանէն կը ծանչնամ: Նա կուսակցական չէ, և երբ ես տեսայ, որ Վարազդատը և մի քանի անցանկալի տարրեր Գործ.[ադի]ր Մարմինը կը ղեկավարեն, ես սկսայ պայքարել այդ մարմնին դէմ: Միայն մի անգամ ես այդ մարմնի նիստին ներկայ եղած եմ, Պաքուպէի⁵⁴ գաղթականութեան մասին զեկուցում տալու համար:

Իմ վերաբերմունքը լաւ չէ եղած նաև Երկրի Կ.[ենտրոնական] կոմիտէի հանդէպ, ուր նստած էին Հմ. Մանուկեան, Բուլղարացի, Տիգ. Պաղտասարեան, և լն., որոնք ոչ մէկ գործունէութեամբ չէին արտայայտուեր:

Գործ.[ադի]ր Մարմնի անդամները ամէն կերպ աշխատած են, որ արևմտահայ ընկերները ազատ մնան գինուորական ծառայութիւնէն:

Վանի կոմիտէի ընկերները աշխատած են, որ պարլ.[ամենտական] ընտրութիւններուն չմասնակցեն արևմտահայերը:

Ես ինքս ալ ծանօթ եմ Վարազդատ Տէրօեանի կրքոտ ճառին, որով ան խորհուրդ կուտար պարլ.[ամենտական] ընտրութիւններուն դէմ պայքար մղել: Խղաթեան ալ մօտաւորապէս նոյն մտքերը յայտնած է:

Հայկ.[ակ] Կօստեան ևս իր ընկերներու տուած քայլերուն մասնակցած է: Միայն մէկ անգամ նա խորհուրդի նիստին ներկայ գտնուած է, անկէ վերջ իր հրաժարականը տալով՝ հեռացած է, որովհետև Բիւրօն ուզած է, որ խորհուրդն իր նիստերը դադարեցնի և ցրուի: Կօստեան այդ առթիւ շատ կը զայրանայ ըսելով, որ արևմտահայերը խաղալիք դարձած են Բիւրօին ձեռքը: Կօստեան, սակայն, երբ սկիզբէն միշտ բողոքողի դերին մէջ էր, բայց վերջը ինքզինքը ատելի գուսպ ալ պահած է և չէ միացած իր միւս ընկերներուն, ատոր պատճառն ալ այն է, որ Կօստեան Վարազդատի և Խղաթեանի հետ երբեք լաւ չէ եղած:

Խղաթեան՝ իբրև կուսակցական մարդ, անմաքուր և կասկածելի է: Կօստեանը, սակայն անկէ շատ բարձր է, նա Վանի քաղաքամիջի միակ պաշտպանը եղած է: Մի քիչ ծոյլ է, բայց որ գործի լծուի՝ կ'աշխատի շարունակ:

Տէր-Պօղոսեանը դաշնակցական է, բայց ոչ գործօն ընկեր: Մէրոբեանը ոչինչ մէկն է: Էյնաթեանը մեր Վանի մաքուր ընկերներէն մէկն է, Պէյլէրեանը ևս լաւ ընկեր է:

2. Կարօ Սասունիի հարցի առթիւ հետևեալ բանաձևն անցաւ.

Հ.Յ.Դ. Դատական Ատեանի որոշումը Կարօ Սասունիի մասին

1920 թ. Ապրիլի 16, Երևան: Հ. Յ. Դ. Ընդհ.[անուր] Ժողովի լիազօրութեամբ կուսակցական Դատական Ատեանս՝ մասնակցութեամբ նախագահ Յովսէփ Տէր-Դաւթեանի, անդամներ՝ Լևոն Թաղէոսեանի և Մերութան Օզանեանի, քննութեան առնելով խմբապետ ընկ. Սմբատ Բօրօեանի յարուցած հարցը, թէ ո՞ր պէտք է մաքրուեն «Մի հայ, մի ոսկի»-ի Կարօ Սասունիի առկալս մնացած բազմաթիւ հաշիւները, կապուած Մուշի շրջանը հաւաքուած ցորեններու, ազատուած հայ գերիներու և Ապահովութեան Խորհուրդի գործունէութեան հետ (տէն խմբապետ Սմբատի հրատարակած տետրակը՝⁵⁵ ուղղուած Հ. Յ. Դ. IX Ընդհ.[անուր] Ժողովի նախագահութեան և ընկերներուն), լսելով նաև այս առթիւ ընկ. Կ. Սասունիի, ինչպէս նաև երկուստեք մատնանշուած մի շարք վկաներու ցուցմունքները և ներկայացուած հաշիւները, եկաւ հետևեալ եզրակացութեան.

Ա. Նկատելով, որ ի հաշիւ «Մի հայ, մի ոսկի»-ի, Կարօ Սասունին ինքը ստա-

54 Քաղաք Իրաքում:

55 Սմբատի հեղինակությամբ տպագրված նշված գրքույկ-դիմում-տետրակ չհայտնաբերեցինք, հավանաբար այն եղել է ձեռագիր տեսքով:

ցած է դրամ հանգուցեալ ընկ. Ռոստոմէն ընդամենը քառասուն ոսկի, որու մեծ մասը գործածուած է ուրիշ ընկերներու կողմէ և որու հաշիւները իր ժամանակին ներկայացուած են ընկ. Ռոստոմիւն, և բացի այդ դրամէն՝ Անդրանիկի միջամտութեամբ Արամեանցի կողմէ տրուած է սասունցիներուն 1.994 ռ. [ուրլի] գերիներ ազատելու համար և Կարօ Սասունին այդ գումարը անոնց կողմէ ստացուած ըլլալուն կուտայ ստորագրութիւն, և ի վերջոյ՝ գործածուած այդ դրամին համար ևս կը ներկայացուի հաշիւ Արամեանցիին,

Բ. Նկատելով, որ Կարօ Սասունին ի հաշիւ Ը. Հ. Բ. Ընկերութեան⁵⁶ Խնուս-Մուշի շրջանին մէջ հաւաքած է ցորեններ մեծ մասամբ ձրի, իսկ մէկ մասը՝ դրամով, որոնց հաշիւները մանրամասնօրէն ներկայացուցած է նոյն հաստատութեան ներկայացուցչին և այս վերջինը մնացած է գոհ Սասունիի գործունէութիւնէն,

Գ. Նկատելով, որ իբրև Ապահովութեան Խորհուրդի անդամ և ի վերջոյ ներկայացուցիչ՝ Կարօ Սասունին այդ մարմնի հաշիւները ժամանակին թերթերու մէջ տպագրած է և ի վերջոյ զանոնք յանձնած է Արևմտահայ Խորհուրդի հաշուապահական բաժնին ի քննութիւն (1919 յունվ[ա]ր. 1), և թէ ասկէ մի քանի ամիսներ առաջ ստեղծուած է առանձին յանձնաժողով մը այդ հաշիւները քննելու համար, Դատական Ատեանս եկաւ հետևեալ եզրակացութեան.

Համարել միանգամայն անպարտ Կարօ Սասունին «Մի հայ, մի ոսկի»-ի և Մուշի շրջանը հաւաքուած ցորեններու խնդրոյն մէջ: Ինչ կը վերաբերի Ապահովութեան Խորհուրդի հաշիւներուն՝ պէտք է սպասել ժամանակ մը ևս, մինչև որ այդ նպատակին համար ստեղծուած յանձնաժողովը հրատարակութեան տայ իր քննութեան արդիւնքը:

Հ.Յ.Դ. Դատ.[ական] Ատեան

3. Բարունակեանի հարցի առթիւ որոշուեցաւ լիազօրել ընկ. Նորիատեանը, որ Կարս երթալուն՝ հարցաքննէ գեն.[երել] Օսէփեանը⁵⁷, Գուրգէն Աղինկեանը և ուրիշները, և արդիւնքը իր քննութեան՝ անմիջապէս մեզ հաղորդի:

4. Դարաչիչակի որբանոցի պաշտօնեանները բողոքի մի գրութիւն ուղարկած էին մեզ իրենց գլխաւոր կառավարիչ Տիգրան Շահբազեանի դէմ, որը բազմաթիւ զեղծումներ կը գործի եղեր: Նկատելով, որ այդ խնդիրը կը վերաբերի պետ.[ական] գոյքերու և գիւղատնտեսութեան մինիստրութեան՝ որոշուեցաւ այդ գրութիւնը նամակով մը անոր ուղարկել:

Հ.Յ.Դ. Դատ.[ական] Ատեանի
Նախագահ՝ Տէր-Դաւթեան [ստորագրութիւն]
Անդամներ՝ Մ. Օզանեան [ստորագրութիւն]

56 Նկատի ունի Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւնը:

57 Հովսէփեան Արտեմ Գրիգորի (1879, Դաղէթ-Խաչէն - 1923, Ալավերդի) - ՀՀ բանակի գէներալ-մայոր:

ԴԱՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՍ ՔՆՆՈՒԹԵԱՆ ԵՆԹԱԿՈՒԱԾ ԳՈՐԾԵՐ

1. N. 1ա Կարօ Սասունիի բողոքը խմբապետ Սմբատի դէմ իբր զեղծարար,
2. N. 1բ Սմբատի ընդհ.[անուր] ամբաստանագիրը կուսակցական մի շարք գործիչներու դէմ,
3. N. 2 [Վահան] Խորէնիի յարուցած հարցը Ստեփան Տէր-Աւետիքեանի շուրջ,
4. N. 3 Ընդհ.[անուր] կոչ Թիֆլիսի դաշնակց.[ական] Ուս.[անողական] Միութեան զեղծումներու մասին,
5. N. 5ա Պարսկաստանի մարմիններու պառակտման մասին գրութիւններ,
6. N. 5բ Քրմոյեանի բողոքը Սաքսապետեանի դէմ իր հակակարգապահ ընթացքի մասին,
7. N. 6ա Սաքսապետեանի պահանջագիրը Քրմոյեանէ բացատրութիւն պահանջելու մասին,
8. N. 7 Եզնիկ Քաջունիէ նամակ մը Անդրանիկի կամաւորներու չվճարուած ռձիկներու մասին,
9. N. 8 Մնացականեանի (Ծաղկաձոր) ամբաստանագիրը Ծաղկաձորի կօմիտէի դէմ,
10. N. 9 Վրաստանի Ազգ.[ային] Խորհուրդի դաշնակց.[ական] ֆրակցիայի դիւանի գիրը Խ. Բզնունիի դէմ իբր զեղծարար,
11. N. 10 Սեպուհի գիրը Համազասպի՝ Բագուի մէջ ունեցած գործունէութեան մասին,
12. N. 11 Խմբապետ Մուրադի բողոքագիրը Քրմոյեանի դէմ իբր անուանարկող,
13. N. 12 Քրմոյեանի բողոքը Վանի կօմիտէի և Արևմտ.[ահայ] Գործադիր Մարմնի անդամներու դէմ հակակարգապահութեան, զեղծումներու և թալանի մասին,
14. N. 13 Արևելեան Բիւրօի ընդհ.[անուր] ամբաստանագիրը,
15. N. 14 Սաքսապետեանի մեղադրական նամակը Վանի 1915-ի նահանջի մասին Արամի և Արևելեան Բիւրօի դէմ,
16. N. 15 Շահաստանի Կ.[ենտրոնական] կօմիտէի նամակի պատճէնը Յ. Ճերմակի մասին,
17. N. 16 Շահաստանի Կեդր.[ոնական] կօմիտէի և Յ. Միրզոյեանի միջև ծագած խնդիրը,
18. N. 17 Վրաստանի Կ.[ենտրոնական] կօմիտէէն ամբաստանագիր մը Լալայեանցի և ընկերներու դէմ իբր զեղծարար,
19. N. 18 Յ. Սարգսեանցի դիմումագիրը զինքը իբրև լրտես բանտարկելու մասին,
20. N. 19 Զաղէտեանի տեղեկագիր մը Բագուի գործիչները և Արարատեանը ամբաստանող,
21. N. 20 Ղէնէվիզեանի բողոքը Պօլսոյ Պատ.[ասխանատու] Մարմնի դէմ,
22. N. 21 Հաշուէքնիչ Յանձնաժողովէն յանձնուած Թիֆլիսի նախկին Կեդր.[ոնական] կօմիտէին հաշուէթղթերը՝ փոխանցուելու համար Դատ.[ական] Մարմնին,
23. N.22 Ա. Բագրատեան-Քալանթարեանցէ ամբաստանագիր Մեծ Ղարաքիլիսէի խնամատար.[ության] մինիտր.[ության] ներկայացուցիչ Ա. Քալանթարեանի դէմ,
24. N. 23 Յ. Բարունակեանի ինքնամբաստանագիրը Կարսի մէջ իր կորսնցուցած 50.000 ռուպլիի համար,
25. N. 24 Արարատ Տէր-Գրիգորեանի պահանջը Բանուոր Սէրգօի վրայ,
26. N. 25 Զեկուցում Թիֆլիսի բանուոր.[ական] և զինուորական խորհուրդնե-

- րու կազմակերպած կարմիր գվարտիայի մասին,
 27. N. 26 Գէորգ Ալթունեանի հարց,
 28. N. 27 Եզոր Տէր-Մինասեանի դիմումագիրը և Վահանէ գրուած անձնական նամակը,
 29. N. 28 Յ. Մանուկեանի ամբաստանագիրը Բաթումի շրջանի կոմիտէի անդամներու դէմ իբրև հանրային դատաւիժներ,
 30. N. 29 Կարապետեանի և 4 ընկերներու ամբաստանագիրը 12 կէտերէ բաղկացած՝ Բագուի և յարակից դէպքերու հետ կապ ունեցող ընկերներու դէմ,
 31. N. 30 Քրմոյեանի պահանջագիրը Ս. Թորոսեանի՝ իր հասցէին ըրած ամբաստանութիւնները քննելու մասին,
 32. N. 31 Թիֆլիսի դաշն.[ակցական] Ուս.[անողական] Միութեան կողմէ գրութիւններ Սարիղամիշի զեղծումներու մասին,
 33. N. 32 Միրզոյեանի խնդիրը,
 34. N. 33 Դատական հարց Իջևանի շրջ.[անային] կոմիտէի անդամներու դէմ Երևանի Կ.[ենտրոնական] կոմիտէի կողմէ,
 35. Խումբ մը խմբապետներու դիմումը իրենց եղած զրկանքը դարմանելու համար⁵⁸,
 36. Պապայեանի և Կարօ Սասունիի միջև ծագած հարցը,
 37. Բագուի Կ.[ենտրոնական] կոմիտէն: Նէրսէս Սարգսեանցի գանգատը Լևոն Միքայէլեանի դէմ,
 38. Բիրօի յարուցած հարցը Ա. Զամալեանի դէմ,
 39. Գեն.[երալ] Ղամազովի սպանութեան հարցը,
 40. Ստեփան Սարգսեանցի հարցը:

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՑԱՆԿ⁵⁹

1. Արարատ Տէր-Գրիգորեանի հարց – 18, 19, 79, 158, 161⁶⁰,
2. Վ. Խորէնիի յարուցած հարցը Ստ. Տէր-Աւետիքեանի շուրջ – 5,
3. Քրմոյեանի ամբաստանութիւնը Մաքսապետեանի դէմ,
4. Ամբաստանութիւն Բզնունիի դէմ – տես վարը թիւ 17-ը,
5. Յ. Միրզոյեանի հարց – լուծուած,
6. Յ. Ճերմակի հարց,
7. Քրմոյեանի բողոքը Սահակ Թորոսեանի դէմ – 3,
8. Գէորգ Ալթունեանի հարց – 1,
9. Յովհ. Սարգսեանցի հարց – 20, 59, 126,
10. Ընդհ.[անուր] ամբաստանագիր Արևել.[յան] Բիրօի կողմէ,
11. Սմբատի ամբաստանագիրը Կ. Սասունիի դէմ – 161, 162, 174, 196, 197, 207,
12. Կարօ Սասունիի ամբաստանագիրը Սմբատի դէմ. Սմբատի հարց – 140,
13. Սմբատի ընդհ.[անուր] ամբաստանագիրը կուսակցական մի շարք գործիչներու դէմ,
14. Պապայեանի բողոքը Կարօ Սասունիի դէմ – 67,
15. Արշակ Զամալեանի հարց – 6, 8, 15, 16,
16. Ալէքսանդր Շարաֆեանի հարց – 20, 43, 57, 68,
17. Խ. Բզնունիի հարց – 20, 99, 104,

58 Թիվ 35-ից սկսած N. համարակալում չկա նշված:

59 Վերջում կա այս ձեռագիր գրությունը. «Մույն մատյանն ունի 216 համարակալված էջեր, որոնցից 210-216 էջերը փակագծերում առնված համարակալված են կուսպատի կողմից: Կուսպատի պատասխանատու քարտուղար՝ Մ. Աղայան [ստորագրություն]: 20.01.1925»:

60 Նշված թվերը բնագրում տվյալ հարցի հիշատակության էջերն են: Բնականաբար, «Վէմ»-ում հրատարակված տարբերակում դրանք չեն համընկնում:

18. Զիֆօն–գինականի հարց – 22, 24, 25,
19. Ստեփան Փանեանի հարց – 27,
20. Արտուշ Քոչարեանի հարց – 28, 74,
21. Սարգիս Մանասեանի հարց – 29, 52,
22. Մանուկ Մոճոռեանի հարց – 31,
23. Զիջեանի հարց – 32,
24. Թիֆլիսի Կ.[ննտրոնական] կ.[ոմիտե]–ի հարց – 23, 38, 157,
25. Թիֆլիսի տեղական կոմիտեի հարց – 36,
26. Թիֆլիսի քաղաքային ընտրութեանց համար ստեղծուած Ազիտացիոն Բիւրօի հարց – 37,
27. Արևելեան Բիւրօի հարց – 39,
28. Հայաստանի Բիւրօի հարց – 41,
29. Մահմանադիր ժողովի կազմակերպչական մարմնի հարց – 41,
30. Միշա Արզումանեանի հարց – 46, 50, 53, 58, 61, 63, 94, 153, 154,
31. Յ. Էլիբէկեանի հարց – 65,
32. Արևելեան Բիւրօի յարուցած հարցերը – 67,
33. Պապայեանի բողոքը Կարօ Սասունիի դէմ – 67,
34. Դևօեանի հարց – 68, 72, 74, 79, 89, 93, 107, 165, 178, 192, 194, 198, 201,
35. Իջևանի շրջանային կոմիտեի երեք ընկերներու հարց – 75, 83, 96, 100, 109, 118, 135,
36. Մուրադի բողոքը Վ. Քրնոյեանի դէմ – 77, 99,
37. Ալէքսանդր Բարլանեանի հարց – 27,
38. Եփրեմ Սարգսեանի հարց – 77, 80, 88,
39. Գ. Մանտայեանի, Խշտոյեանի, Լալայեանի հարց – 78,
40. Իջևանի կախակայուած ընկերներու հարց – 96, 100, 109, 133,
41. Վ. Քրնոյեանի և Բիւրօի բողոքը կուսակցական մի շարք ընկերներու դէմ – 98, 136, 164, 166, 182, 202,
42. Թիֆլիսի Ուս.[ննտրոնական] Միութեան յարուցած հարց – 76,
43. Բագուի ընկերներու դէմ յարուցած հարց – 91, 113, 117,
44. Վարազդատ Դէրօեանի հարց – 137, 159, 166, 190,
45. Գէորգ Ղազարեանի հարց – 115,
46. Կ. Բարունակեանի հարց – 123, 153, 196, 209,
47. Աւ. Օհանջանեանի հարց – 126,
48. Ռուբէն Դրամբեանի հարց – 144,
49. Գրիգոր Բուղարացիի հարց – 147,
50. Գրիգոր Խլղաթեանի հարց – 150, 164,
51. Հայկակ Կօստեանի հարց – 150, 160, 164,
52. Բժիշկ Ա. Տէր-Պօղոսեանի հարց – 151,
53. 1919–ի Վանի կոմիտեի հարց – 152, 164,
54. Ինժեներ Ղասում Պէկօվի հարց – 178, 189,
55. Երևանի Կ.[ննտրոնական] կ.[ոմիտե]–ի հարցը Բիւրօի դէմ – 179,
56. Ռուբէն Քաջ.[բերունիի] հարց – 129,
57. Արշակ Պօլօեանի հարց – 201,
58. Տիգրան Շահբազեանի հարց – 209:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 150, թթ. 83–108 հակ.: Բնագիր: Ձեռագիր:

Վերջ